


# ԴՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1902

„Droschak“  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ



## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

### Մ Ա Յ Ի Ա Ն Գ Ա Ց Ի Ժ

Համիրի պատասխանատու Կ. Կոմիտէի վճռով՝  
Մարտ 31-ին, X. քաղաքի մէջ „Աղբիւր-Աւար“ խմբի  
տէնօրիստների միջոցով մահաւան պատժի ենթարկեցաւ  
Խալաթ գաւառի Ուրտափ գիւղացի ՍՕՂՕ ՄԵԼՔՕՆ-  
ՔԻՕՄԻԵՆՆԷ, որի մատուցած սպանւած էր Սերոբի  
Հօրեղբորդի Յակոբ ճարտարը և „Դաշնակցութեան“  
հրահանգները կառավարութեան յանձնւած: Տէնօրիստ-  
ները ազատ են:

### Յ Ե Յ Ե Ր

Ճգնաժամը յարատեւում է իր սարսափեցնող միա-  
կերպութեամբ: Մանր ու խոշոր „սարսափները“ հայ-  
րենիքի ամբողջ տարածութեան վրայ քայլ առ քայլ  
իրագործում են նախամտածւած, դիւային ծրագրեր:  
Տեղեկագիրներ՝ մինը միւսից ծանր, սիրտ կտրատող  
անընդհատ գալիս են մեզ տառապանքի աշխարհից:  
Վարդանք, չձանձրանանք կարգալուց: Ի՞նչ տայ յեղա-  
փոխական օրգանը, երբ իրականութիւնը մի նշանակեց  
անգամ չի բարեփոխուում, երբ սրի անողը հարւածները  
և զոհերի ցաւագին բառաչելը միակ հրատապ այժ-  
մէութիւնն են կազմում:

Մի տեղ անպաշտպան ռայեային կտոր-կտոր են անում  
ու դիակը ամենավայրագ պրօֆանացիայի ենթարկում,  
մի այլ տեղ քիւրդ լամուկը՝ սափոր անպատիժ սիրագոր-  
ծութիւնների՝ հայ աղջկան է դուրս քաշում անկողնից,  
մի այլ տեղ տուրքերի ենթակայ պարիան ծեծի և անլուր  
չարչարանքների ներքոյ իր վերջին ունեցածն է ծախում,  
մի այլ տեղ մահու սպառնալիքներով կրօնափոխութեան  
են մղում հայ մասային...

Եւ ամէն տեղ դաւեր, անվերջ դաւեր...

Եւ դեռ գանուում են մարդիկ, որո՞ճող, անբխակից  
մարդիկ, որոնք այդ անդադրում ու դժոխային դաւերի  
հանդէպ քաջութիւն ունին ասելու մեզ „Թողէք ձեր  
յարձակումները, հրաժարեցէք պայքարից, մի՛ խռովէք  
ժողովրդի հանգստութիւնը“...

Անպատասպար, թափառական հօտը աղիողորմ գան-  
գասներով դիմում է վիճակների առաջնորդներին, վեր-  
ջիններս աղեկագրում են արիւնոտ փաստերը հայոց

պատրիարքին, իսկ պատրիարքը ի պատասխան՝ այդ բո-  
լորին՝ շրջաբերականներ է տարածում, խաղաղութեան  
ու հնազանդութեան հրաւեր է կարգում բազմատանջ  
ժողովրդին:

Դիւանագէտն անգամ սոսկում է այդ ժողովրդի  
տառապանքներից, իսկ հայ ազգի պաշտօնական ներ-  
կայացուցիչը շարունակում է սրտաշարժ հաւատարմու-  
թեամբ կատարել իր տիրոջ հրահանգները:

Ձրկայ աւելի նողկալի և աւելի աղետաբեր բան, քան  
այդ ծառայական համակերպումը: Վիճակների առաջ-  
նորդներն ու փոխանորդները խոր գիտակցում են այդ,  
և այսօր նրանցից շատերը „ըմբոստներ“ են արգէս...  
Ի տես ժողովրդի սև թշւառութեան և պատրիարքական  
ամուլ „թագրիւնների“ նրանք հետզհետե իրենց հա-  
մակրութիւններով յեղափոխութեան կողմն են թեքում:

Մինչդեռ ըմբոստութեան տենդը օր աւուր վարակում  
է հայրենիքի սրտացաւ ու ազնիւ զաւակներին — յեղա-  
փոխութեան հայ թշնամիները խաւարի մէջ կամ բացար-  
ձակօրէն առաջ են տանում իրենց շահատակութիւնները:  
Ազգի „երեւելիները“ ղսպուերականի սրտում և ուրիշ  
„վտանգաւոր“ տեղերում բարձրաձայն յորդորներ են  
ուղղում ժողովրդին՝ հետամուտ լինել „խռովարար-  
ներին“, բռնել ու յանձնել նրանց հայրահնամ կա-  
ռավարութեան:

Հայ մատնիչները խրախուսւում են հայ էֆէնդի-  
ներից, իսկ բոլորը միասին խրախուսւում են հայոց  
պատրիարքից:

Պատրիարք, աղա, մատնիչ, լրտես — հայ ժողովրդի  
բոլոր ցեղերը, միացած, թե թեկ տա՞՞ այդ ժողովրդի  
անունով իսկ կազմակերպում ու առաջ են մղում հա-  
կայեղափոխական արշաւանքը: Եւ երբեք կամարիլան  
հրձում է, տեսնելով իր հաւատարիմ ծառաների այդ  
անսահման հաճոյականութիւնը:

Դառն է, պժգալի է իրողութիւնը: Մարդիկ դիւցաղ-  
նական անձնւերութեամբ նետում են արհաւիրքների  
մէջ՝ միակ փրկարար ուղին ցոյց տալու կոտորուղ ժողո-  
վրդին, — իսկ հայազգի ցեղերը որսկան շների պէս  
հետապնդում են նրանց ու գահճի վեճիւնդութեանը  
մատնում:

Եւ — զարմանալի բան — որքան աւելի է լարում  
հայկական ճգնաժամը, որքան աւելի է հարկադրւում մեզ  
կուռի, դիմադրութեան անհրաժեշտութիւնը, այնքան,  
կարծէք, աւելի է աճում այդ ցեղերի թիւը:

Իրողութիւնը քստմնելի է, բայց սարսափեցնող հանգամանք չունի: Վաղուց է, որ գոյութիւն ունի այդ ներքին, անխուսափելի պատուհասը: Վաղուց է, որ ժողովրդային պարագիտների վոճակները՝ հնազանդելով մարդկային ամենացած բնազդումներին՝ ճգնում են խորտակել յորձանքի մէջ տարուբերող յեղափոխական նաւի առագաստները... Նաև, այնուամենայնիւ, խրոխտ, անգրգռելի՝ առաջ է լողում դաւերի ու փորձութիւնների միջից, աջ ու ձախ շանթեր նետելով չարաշուք հակառակորդների վրայ:

Եթէ Օրմանեանները սխտեմաբար ու առանց խղճահարւելու փակել են ուղում բողոքող բերանները, եթէ նրանք ժողովրդի մինչև երկինք հասնող աղաղակների հանդէպ «խաղաղութեան» ու «հնազանդութեան» քարոզը միայն ունին իրենց շրթունքների վրայ — ապա լաւ պիտի գիտենան նրանք, որ երկնային դատարանը միակ ատեանը չէ, ուր պիտի քաւեն իրենց մեղքերը:

Եթէ հայ ժողովրդի տականք՝ աղաները, լրտեսներն ու դաւաճանները բնաւ չեն փարշում սուլթանական սպասաւորի անարգ պաշտօնից, — պիտի գիտենան, որ հայ տէնորիստը իր ամէնօրեայ դժնդակ պայքարի մէջ մի վայրկեան անգամ չի մոռանում նրանց:

Որքան էլ մեզ համար կսկծալի լինեն եղբայրասպանութեան տխուր արարողութիւնները, — պիտի շարունակենք այն՝ առանց վարանելու ու խղճի խայթ զգալու:

Յեղափոխական Նեմէզիդեան գուժ չունի աղագաւալ ցեցերի համար:

Մ Շ Ե Յ Ո Ւ Մ Օ Ր Ա Ղ Ա Չ Ա Ն Ք Ը

- Թիփի, բօրան մուժ գիշերին
- Կը պտտւի ֆէդային,
- Պատռոն տաշին խաչիակ թալած
- Չեւքին թուանք ու սուխն.
- Ախ, ձեզ մատաղ, ջան ֆէդայիք.
- Չեր մէր ձեզի թող մեռնի,
- Մշու սուլթան Սուրբ Կարապետ
- Չեզի քօմակ թող եղնի:
- Դուք վախցուցիք քուրդ անօրէն,
- Քշիք մեր սար ու ձորից,
- Քաֆըր քրդի աչք վախեցաւ.
- Ջան ֆէդայու գուլուլից:
- Ախ, ֆէդայիք, ձեր սատաղէն
- Չեր խէտ տարէք զիմ տղէն
- Չեր խէտ մռնի, ձեր խէտ ապրի
- Ազգի մատաղ զիմ տղէն:
- Թող դէն թողնի խարոք ու մաճ
- Իմ մէկ ու ճար աղիկ լաճ,
- Քիչ թուանքի խեթ թող խաղայ
- Իլ թող չըսայ քրդին խարձ...

ՉԱՐԻՒՒՔԱՆԱՔ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Տ Ա Ր Օ Ն Ե Ն

1 մարտ 1902

Տեղիս կառավարութիւնը սկսած է պաքսմաթ եփիւլ տալ: ձիւնը վերցւելուն պէս իր գիտաւորութիւնն է ամբողջ զօրքը Սասուն հանել մէկ կողմէն աղբիւրը հալածել և միւս կողմէն ալ կայսերական իրատեով զօրանոցներ շինել Կէլիէ-Կուզան, Շէնքը, Սէմալ և ուղմափտական կէտերու վրայ և Գաւասարի ժողովուրդն ալ վար իջեցնել: Իր բուն նպատակն այդ է. և ձեռքէ գալածը պիտի աշխատի ի գործ դնելու: Արդէն տուր զօրաց կեդրոնատեղի ըլլալը կը հասկնանք, իսկ աշնան Կարինէն ու Խարբերտէն եկած ամբողջ զօրքերուն վրայ տասը օր առաջ 500 հծծեալ զօրք ևս եկաւ:

Սարսափելի և անխիղճօրէն թահսիլաթ կ'ընեն թէ քաղաքիս մէջ և թէ գիւղերը. միւլազըմ (յիսնապետ) Նաճի Ալլահվերտի էֆենդին ելած է գիւղեր, ամէն մէկ գիւղ 1-2 օր մնալու պայմանաւ. և ամէն մէկ գիւղէն իսկոյն 5-10,000 դըշ կը պահանջէ. որ գիւղ որ առաջին անգամ իջնէ, իսկոյն թէ այրեր և թէ կիներ զօրաց միջոցաւ հաւաքել կուտայ, կը մերկացնէ զամբողջն ալ, քով քովի կը կայնեցնէ (թերևս լսած էք որ գիւղերու ախոռներու մէջ ջրհորներ կան որ տավարներուն ջուր կը խմեն), ջրհորներէն պաղ ջուր քաշելով կը լեցնէ այդ խեղճերու վրայ, ու կըսկսի կահուղ. և դալար վարոցներով ոստիկան զինուորաց և զօրքերու միջոցաւ ամէն մէկին 3-50 փայտ զարնել, մինչև որ անկենդան գետին կինան. անկէ վերջ նոր կըսկսի հարկահաւաքութիւն, որ 1 օրուան մէջ խեղճերն զիրենց եղած չեղածն կը ծախեն կուտան, արդէն թահսիլաթիւններն որ գիւղ որ մտնելու լինին, մտափործներն ալ հետերնին կը պտտցնեն, որու որ մէկ կով կամ ոչխար իսկ լինի պիտի զօրագին կերպով ծախել տան: Արդէն սկսած են հողագործի վերաբերեալ տավարներն ալ ծախել այս գարնան ինչո՞վ պիտի խեղճերն լուծք ընեն չեմ գիտեր, իսկ քաղաքին մէջ հարկահաւաքութեան համար ծեծ ու քաշ այնքան չկայ. բայց այն որ չունենայ դրամ տալու, իր տան միջի կահ կարասիք, անկողին, ուտեստի ցորեն, ինչ որ է բռնագին կը բերեն ծախեն, և եթէ ատանկով հաշիւնին չլինայ, բանտ կը դնեն, ուր այժմ 100-է աւելի մարդեր տուրքի պատճառաւ բանտարկած են: Յարտոսք գիւղացի Խանօ անուամբ երևելի և հաց տուող հայ մը, քիւրդ Լաճի պէյի ծառաներու ձեռամբ երեկոյեան ժամը 12-ի միջոցին հրացանի մը գնդակով սպաննեցաւ, պատճառ որ ինք հարուստ էր. քանիցս, ինչ որ Լաճի պէկ զօրեր ուզեր է, թէ փարայ թէ ցորեն և թէ տավար տուեր է, բայց այս վերջի օրերուն մէջ որ նորէն բան կուզէ ելեր, կ'ըսէ թէ հիմակ պատրաստ չկայ ի վերջոյ կուտամ, այդ ըսելուն, Լաճի բէկի հրամանաւ իսկոյն ծառան կը զարնէ և կը ձգէ հեռանայ. գիւղի մէջ զօրք ալ կը լինի, բնաւ ետեւէն չեն երթար: Մէկ մ'ալ անցեալ աշնան որ թիւրք ժողովուրդ իրենց մէջ ճան-բէզար անուամբ խուճեր կազմելով Մշոյ մօտակայ գիւղեր 30-40 մարդասպանութիւններ ըրին ու գիւղեր աւարի տուին, հիմակ հետըք հետէ այդ խուճերու թիւր երթալով սուտարացած է քաղաքիս մէջ և սկսած են ազգին անգին հրթալ և

քիւրդերն ալ խրախուսել որ ջան-բէզարի պաշտօն ստանանն: Պալաքցի անունով աշիրաթի ցեղապետ Հաճի Ֆէհրոն իր ամբողջ ստորագասեալներին գրած է որ քարնան գաղուն պէս պիտի վերսկսին իրենց չարագործութիւնները ի գործ դնել խեղճ և անմեղ ժողովորդի դիմուն: Իրաւ որ ամբողջ հայ ժողովուրդ այսօրվն ալ ու վախի մէջ ինկած են, թէ ի՞նչ ընեն չեն գիտեր... Բնաւ կառավարութիւնը իրենց չի դիպչի, այժմ 150-էն աւելի հայ քաղաքական յանցաւորներ բանտարկւած կան, որոնցմէ 90<sup>0</sup>/<sub>10</sub> խեղճ և անմեղ մարդիկներ են, հարցաքննութիւն արդէն չկայ, ըլլայ ալ տարէնը 2 անգամ չեն հարցաքննի: Սասունցի Խալիլ աղան որ Անտոկայ կողմեր սպաննւեցաւ, այդ պատճառաւ 40-50 հոգի բանտարկւած հայեր կան որ տարի ու կէսէն աւելի է որ բանտն են, այս օրեր ատոնց հարցաքննութիւններ սկսած է. արդէն բոլորն ալ անմեղ ըլլալնին յայտնի է, բայց շատ կարելի է որ ինչ որ խեղճեր են, գրամ չունին որ կաշառք տան, մահաւան դատապարտւին, իսկ ունեցողներէն մի քանիս թերևս թերթե վճռով մը ազատւին, բայց թէ ե՞րբ այն ալ յայտնի չէ:

II

14 մարտ Մուշ

Ռուսաց քօնսիւլ Տուճանսկի հեռագաւ մեր կողմերէն: Խօրհօրութիւնները վերսկսեցան: Աստաղած թիւրք զինւորներ, քիւրդեր իրենց հրամանատարին թոյլտուութեամբ ահռելի տառապանաց կը մատնեն Նորշէն գիւղին դժբախտ հայերը, որոնցմէ մէկ երկուքը կը սպաննեն, բոլոր տունները կը կողոպտեն, սարսափահար ընելով բնակչութիւնը. ձեռք ինկածները կը խոշտանգեն, մանաւանդ որ քստմնելի է աղջիկները և նոր հարսները կը բռնաբարեն չարաչարօրէն: Քառասունի մօտ աղջիկներ և հարսներ բռնաբարւած են թող զայլս: Շատ մը կիներ երիտաներ կը վիժեն, սոսկումը այն աստիճան կը ըլլայ մինչև առաւօտ որ գիւղին բոլոր ժողովուրդը ցան ու ցիր կը ըլլան: Յիշենք քանի մը սպաննութիւններ ալ Դեկտ. 27-ին Արտօնգ գիւղի ուն Բօզօն իրիկունը իր տան մէջ գնդակահար կը սպաննուի Մառնիկցի քիւրդերէ: Աարլօյէն իր տունը վերագարծին՝ Գառնեցի Ոսկիան Յակոբեան չէրբէզներէ և քրդերէ բռնելով ճամբու վրայ կտտամահ կը սպաննուի. դահիճները ողջ ողջ անոր թեկերը և գլուխը կը կտրեն և իսպառ մերկացնելով ձիւներու մէջ կը թողուն: Բերդակցի աղքատիկ Յովէ անուն հայ մը ռեժիի գօլճիներէ այնքան կը խոշտանգուի որ երկու օրէն կը մեռնի, որովհետև ունէ առանձին տեղ խալամի պատահող ամէն հայ կը սպաննուի և կը յօշոտուի: Այս պահուս Մշոյ դաշտի հայերը սոսկալի և նման չտրմուած չարչարանքներէ կը տառապին հարկահատութեանց վրայ մի նոր բան ալ աւելցւած է: Ողորմելի հայերը, ձմրան սաստիկ ցուրտին, պաղ ջուրի մէջ ընկղմելէ յետոյ, կը հանեն ու կը գանակոծեն. բազմաթիւ գիւղեր այս փորձութենէ կանցնին հիմակ: Խորին յուզումով լսեցաւ երկու օր յառաջ Դաշտի Գոմս գեղէն Գրիգորի կին Ալմաստի սպանումը ահռելի չարչարանաց ներքև: Հարկահատները այդ աղբատ կիներ բռնելով ձեան ջրով լաւ մը կը թրջեն, ապա գետինը գլորելով երեսի վրայ պառկեցուցած այնքան կը ծեծեն որ վերջապէս կը մեռնի: Ընդհանուր տառապանքները ուրազօճել շատ երկար է...

ՆԱՄԱԿՆԵՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԷՆ

8 յունւար 1902

Դեկտ. 16-23 եօթնեկին մէջ ամէն գիշեր Ռընտվան գիւղը և շրջակայքը գողերու ու աւազակներու յարձակումներէ գլուխ չեն կրնար առնել: Մերթ՝ գիւղացիք արթննալով զենքով կը դիմադրեն, մերթ վախնալով նիւթական մեծ վնասներ կուտան: Նոյն շաբթուն մէջ Մուսուրջան աշիրեթէն 12 հոգի Ռընտվանի մօտիկ Կրպոյի ջաղացքը կը կոխեն և հոն գտնուող 12 էշերը իրենց բռններով կառնեն կը տանին: Գիւղացիներուն նախիրը ևս յափշտակւած և քանի մը տուններ ալ կողոպտուած են գիշերով: Պըշարի եղբայրը չէմիլ երկու սպանութեանց մեղքը քաւելու համար, ըստ սովորութեան, կառավարութեան գլխաւոր պաշտօնէից մեծկակ գումար մը պարտաւոր է վճարել, զոր հայերէն հաւաքելու է: Ռընտվանի միւթար Օհան բան մը վճարելու անկարողութիւնը յայտնելով չէմիլ կատողած յքեղ շուներուս պիտի կերցնեմ՝ ըսած է: Ասոր վրայ գիւղացիք խոստացած են պայրամին օրը տանիլ իրեն ուզած գումարը ի նշան հպատակութեան: Պըշար, ամէն պարագայի նիւթական նեղութիւն մը ունեցածին, հայերու քսակին կը դիմէ, չի տուողին կենդանիները կառնէ: Այսպէս գրաւած է այնգասրցի Կրպոյի 6 եղները, ինչպէս նաև Բալունի գեղացի հայու մը 5 եղները, որովհետև ասոնք իրեն վճարելու դրամ չունէին: Պշարի կացութիւնը շատ փափուկ է այժմ, իր աշիրեթի մարդիկը կը բռնադատեն որ ունեցածնին չունեցածնին ծախսեն և զէնք գնեն:

Դեկտ. 21-22-ի յուսանալու գիշերը, ժամը 7-ին, Տիգրանակերտի ոստիկանաց հազարապետը քանի մը ոստիկաններով քաղքին սրճարաններէն մէկը կը կոխէ և հոն գտնուող թիւրքերուն վրայէն 70 կտոր զէնք կը գրաւէ, բացի խոյս տուածներէն ու պահածներէն: Քրիստոնեաները քիչ մը շունչ առնելու վրայ էին այս դէպքին վրայ, երբ երկու օր ետքը միւթէսարիճը նոյն գրաւած զէնքերը աճուրդի հանեց իրենց նախկին տերերուն ծախելով զանոնք:

Այն տարաձայնութիւնը, թէ Բաղէշի կուսակալութեան մէջ 1,500 յեղափոխականներ ցրւած են, ահ ու սարսափի մատնած է կառավարութիւնը. այնպէս որ Տիգրանակերտի հազարապետը 30 հեծեալ զինւորներով քաղքին շրջակայքը 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռաւորութեան վրայ ման կուգայ հսկողութեան համար:

II

14 յունւար

Հարստահարիչ քիւրդերն այս անգամ վերջնապէս համոզելով անվարկ կառավարութեան մտացածին ուժին և կարողութեան, առաջընէ անհամատեղ եռանդով սկսած են իրենց շահատակութիւնը: Ահա մի քանի նմոյշ.

Ա) Դեկտեմբերի սկիզբները թահսիլաթի համար զօրք կը շրջագայի Զօգի գայմագամութեան ենթարկւած գիւղերն: Հարկահատք զօրքերն Նուաշ ա գիւղն մտնել ուզելով՝ գեղին տէրը և աղան Ալիէ Եիւնըս զինուորութեամբ դէմ կը դնէ և զօրքերէն մին ծանր կերպով վիրաւորելով կը փախցնէ զօրքերը: Ախրաւոր զինւորը Սլելրդ տարւելով քիչ օրէն Մուհամեդի գիւղը կը դիմէ:

Ն Ա Մ Ա Կ Մ Ե Ր Ս Ի Ն Ե Ն

14 ապրիլ 1902, Մէրսին

Բ) Դեկտ. 9-ին գիշերը Ղարզանի աղաներէն Պըշար, մի քանի արբանեակներով Ա յ ն գ ա ս ը ր գեղին վրայ կը յարձակի և կըսպաննէ երկու քիւրդ: Կը հաւաստեն թէ մինչև այսօր Պըշար աղան 43 հոգի սպաննած է եղեր:

Դեկտ. 15-ին գիշերը գողեր կը մանեն հայազգի Ապտօ Յակոբեան անուն կողակարին խանութն և կը կողոպտեն զայն: Կառավարութիւնը լուռ ու մունջ ակա- նատես կը լինի այս ամենուն: Իր միակ զբաղումն է քրիստոնեաներէն տուրք հաւաքելը: Այս օրեր նորէն սկսած են բուռն խտուածիւնք տրոց հաւաքման գործին մէջ:

Հինգ տարիներէ իվեր Սղերդին մէջ կը գտնուի զին-ւորական բժիշկ (բօլադասի) Գատրի անուն, որ իր լերբ, վայրագ, յանդուգն արարքներով ու շահատակութիւն-ներով մեծ պատուհաս մ'եղած բոլոր տեղացիներուն ընդհանրապէս և կաթօղիկներուն մասնաւորապէս: Ամէն օր շուկայի հրապարակին վրայ խել մը մարդիկ նշաւակ կ'ըլլան անոր այլանդակ քմահաճոյքներուն: Զօրքերու ազդեցութեամբ ուզած կ'ինն կամ աղջկին իր կրից կը գործածէ: Քաղքին էշ գիտ տաճիկ երիտասարդութեան հետ դաշնակցած անլուր բռնաբարութիւններ ու չարա-գործութիւններ կ'ընէ անպատիժ:

Սեպտ. 14-ին իր սովորութեան համեմատ Տօրթօրը կաթողիկէներու թաղի կայերը օղի խմելու համար նստած էր տեղացի բռնաւոր երիտասարդներէն Ապտէ Գալուս և Նասրի Շամատէր անուն անձերու հետ: Այդ միջոցին այնտեղէն կանցնին կաթողիկ ազգէն Հաննա Ճըճէ և Մ. Եուսուֆ անձինքը. տօրթօրն իսկոյն իր բաժակակից ըն-կերներով լաւ մը ծեծել տալէն յետոյ, կառավարութեան բանտարկել կուտայ:

Դեկտ. 19 շաբաթ օրը իրիկնադէմին, զինուոր մը քօլարկած կ'ինձը հետն առած հայոց թաղն կուգայ զայն տեղ մը խցելու համար. մէկ-երկու դուռ զարնելէ յետոյ Իսրայէլ Էմիրեան անուն հայու մը տան դուռն բաց կը գտնէ և անկից ներս մտնելով՝ տանտիրուհի-ներուն կըսպառնայ որ քօյրն (այսպէս կ'անուանէր) մէկ քանի վայրկեան պահեն իրենց մօտն, մինչև որ կարենայ թաղին մէջ առանձնասենեակ մը վարձել 8-10 օրուան համար. խեղճերն թէև կը պողան, կ'ընդդիմանան, բայց առ ահի լռելիայն ու յակամայս հաւանութիւն կուտան և ներս կընդունին յիշեալ կնիկն, որ սակայն, ինչպէս վերջերս հասկցեցաւ, իր քօյրն չէր այդ, այլ իր հոմա-նուհին: Զինուորն կերթայ և կէս ժամէն կուգայ կը տանի իր կրծօնն իր վարձած տունն, ուր մինակ մէկ գիշեր կը մնայ, կը փախչի դրկից զինուորական զապիթի մը երիտասարդ տղուն ձեռքէն: Զապիթօրդին՝ կինարմատին փախուստին վրայ կատղած, խնդիրն գրով մը Ասքարիյէ գայմագամին կիմացնէ համակ զբարտութեամբ լի և հայուն: Բոլորովին աննպաստ: Գայմագամն որ ինքնին հայատեաց մարդ մըն է, բիրտով ու գաւազաններով 15-20 նէֆէր զօրք կը զօրէ չափուշի մը հետ հայն ձերբակալելու—որ բարեբախտաբար խնդրոյն ծագումէն առաջ բացակայ էր Սղերդէն— և իրեն ներկայացնելու համար, եկան, խուզարկեցին տունն. փնտռեցին, ամէն ծակուծուկ մտան, բայց ոչինչ գտան, յանիրաւի տան-տիրուհիներն ծեծեցին, պղտիկներն լազուցին, դռներն խորտակեցին. թաղեցիներուն պատուոյն սպառնացին և դեռ ինչէր, մէկ խօսքով ամբողջ թաղն ահ ու սարսափի մէջ ձգեցին: Դիմում եղաւ, բայց թիւրքն միշտ անողոր մնաց:

«Արդարութիւնը ամէն կառավարութիւններուն հիմն է» ըսած է. կ'երևի այդ պատճառաւ ըլլալու է որ հիմը արդէն խախտուած թիւրք պետութեան կառավա-րելու եղանակին մէջ «արդարութեան» միտքը անրնա-կանաբար իր հաւասարակշռութիւնը բոլորովին կորսն-ցուցած է: Այն ան հայուն որ կամաւ կամ ակամայ թիւրք դատարաններէն ներս իր ոտքը կը կոխէ, եթէ պարզ յանցանքով (delit) կանչուած է հարցաքննիչ դա-տաւորի մը առջև, շատ չանցած ինքզինք պիտի գտնէ եղեռնադատ ատեանին առջև, եթէ քաղաքային դատ մ'ունի տաճիկ հետ, բնաւ հարկ չկայ կասկածելու որ դատը պիտի կորսնցնէ: Ամենամեծ խեղացիութիւն պիտի ըլլայ հայու համար ուրեմն, աչքը տեսնելով իր իրա-ւունքներէն վազ անցնիլ և բերանը սրբել չմտնալով նաև գէթ արտաքնապէս, Երեսանց բարեկամութիւնը չխցել իր իրաւունքը բռնաբարող թիւրքին հետ, եթէ ուզէ անոր մի ձրի զբարտութեան զօճ չերթալ: Եթէ թիւրքի մը վրայ եղող արդար իրաւունքդ պաշտպանելու յամուտիս, կորուած մըն ես. նախ կըսկաւին դատաւորներու կողմէն անընդհատ ձգձգումներ, գնա-եկուններ, վերջը կուգայ փաստելու եղանակը, որ մինակ թիւրք դատա-ւորի մը խիղճը կրնայ տանիլ: Հայը թող հազար պաշ-տօնապէս վաւերացեալ և անպաշտօն sous seing privé տօքիւմաններ ցոյց տայ, օգուտ չունի. նա կեղծ է քանի որ հայու մը կողմէն կը ներկայացուի և հայ իրաւունք մը պիտի պաշտպանէ. վկաներ պիտի ներկայացնես, օճճ անոնք հայեր են, կեա՛վուրներ են, և վկայութիւննին ունէ արժէք մը չունի. թիւրք վկայ բերել, ադ ալ բո-լորովին անհնարին դարձած է, վասն զի ոչ մի թիւրք ի նպաստ հայու վկայութիւն մը ընելու ոչ կարող, ոչ ալ տրամադիր է: Ուրեմն ակամայ անիրաւ մըն ես, վասն զի իրաւագուրկ մըն ես: Հետեւաբար շատ քիչ կը պատահի որ հայ մը թիւրքի դէմ դատ վարէ, և ստիպուած է աշխատիլ որչափ կարելի է դատի մը տեղի չտալ թիւրքի մը հետ, վասն զի համոզուած է որ այդպիսի մի դատ որչափ աղետաբեր պիտի ըլլայ իրեն և իր ընտանիքին: Ուստի կրնաք երևակայել այս իրաւագրկութեան տխուր հետեւանքները, տնտեսական քայքայում, աղքատութիւն և փձացում. և ահա արդէն այս է թիւրք իշխանու-թեանց միակ և միակ նպատակակէտը, որուն կը ձգտի միշտ և ամէն պարագայի մէջ:

Հայերուն դէմ իգործ դրուած այդ սանձարձակ անի-րաւութիւններ, զրկանքներ երբեմն խորթակը կը բանայ թիւրք պաշտօնեաներուն օտարահպատակներուն ալ հրամցնել եթէ առիթը ներկայանայ, այդ դաւն պտուղ-ներէն թէև անոնց պատկանած տէրութիւններէն ոմանք, իրեն հպատակ անհատներուն շահերը պաշտպանելու համար մարտանաւեր ձաւթեն:

Ասկէ 2 ամիս առաջ Ադանա պարի դատատու մը կուգայ իտալական հպատակ հրէա մը, Դէտէշի անու-նով: Ընտանիքն ալ հետն էր: Մարդը կուսակալէն ար-տօնութիւն կը խնդրէ մի քանի ապօնէներուն պարի դաս տալու համար: Կուսակալը կը մերժէ: Այս մերժումի վրայ կը դիմէ իր հիւպատոսարանին կը պարզէ եղելու-թիւնը և նա իրեն կը պատուիրէ որ երթայ և գործը շարունակէ. Հիւպատոսին տուած հրամանին վրայ Դէտէ-

շին կըսկսի իր դասաւանդութիւնները: Բաւական հայ երիտասարդներ ալ բաժանորդ կը դուրսն եւ կըսկսին դաս առնել: Երբ կուսակալը կը լսէ, շուտով հայերուն խստիւ կարգիլէ Դէտէշիի դասերուն յաճախելը, բայց յոյն եւ օտարազգի բաժանորդներ կը շարունակեն:

Օր մըն ալ ի՞նչ կը տեսնես: Գոմիսէր եւ քանի մը բօլիսներ կերթան մարդուն տանը առջև, բռնի կ'արգիլեն բաժանորդներուն մուտքը եւ հետեւեալ օրն ալ բռնի կը մտնեն մարդուն տունը, ներսը գտնուող կահ-կարասիքն ալ դուրս կը նետեն եւ Խտալիոյ թագաւոր էմմանուէլ II-ի մի պատկերն ալ ոտքի տակ կ'առնեն եւ կը բզքտեն: Խնդիրը աւելի կը ծանրանայ մարդուն կնկան հիւանդութեամբը: Դէտէշին անմիջապէս կերթայ հիւպատոսը կը գտնէ եւ հիւպատոսը քանի մը գովասանք կը լսկէ, որոնք կեղծ ըմբիշտներու պէս քանի մ'օր պտտեցան դրան առջև, իրենց չուխայէ չէքքէներուն փայլը խտխտեցնելով անցորդներուն աչքին առջև: Ալ իտալական թարգմանը դիմում՝ դիմումի վրայ կ'ընէ, եղելութիւնը կը տեղեկագրուի Հալէպի ընդհանուր հիւպատոսին, որը իր կարգին խստիւ կը հեռագրէ Մէրսինի իտալական փոխ հիւպատոսին, որ այս խնդրի մէջ իր աւանդական շահասիրութիւնը եւ դանդաղութիւնը մէկ կողմ դնէ: (Դժբախտաբար Մէրսինի իտալական փոխ հիւպատոսը սեղանաւոր վաճառական յոյն մըն է, որուն շահերը միշտ կը պահանջեն որ շատ մը զեղծումներուն վրայ աչք դոցէ): Փոխ հիւպատոսը դիմումներ ըրաւ իր թարգմանի միջոցաւ, բայց դիմումները տակաւին եւք մը չուսնցան: Կ'ըսեն թէ բաւական պատասխանատուներ կան այս խնդրոյ մէջ: Առաջինն է Արանայի վիլայէթի թարգման Աւետիս Սիսլեանը, որ լքտի եւ սինլքոր մարդ մըն է: Այս թշուառ արարածը ամէն բանի մէջ քիթը կը խօթէ. մանաւանդ հայ ազգային-կրօնային գործերու մէջ: Կաթողիկոսական ընտրութեան առթիւ բաւական մեքենայութիւններ եւ ստորութիւններ ըրաւ: Ինք հայ հռովմէական մըն է եւ եղբայրը նախկին ոստիկանապետ նազըմի արարած տիրահաշտակ Լեոն Սիսլեանի:

Գաղով Կիլիկիայի հայութեան—միշտ միւսնոյն յանկերգներն են, որ իրարու կը յաջորդեն. մասնակի սպանութիւններ, առեւանգումներ, հարստահարութիւններ, թալաններ, կառավարական կեղեքումներ... և ասոնց բոլորին հեղինակներուն անպատժութիւնը:

Արանայի հայ հռովմէականներուն գերապայծառ Տ. Պօղոս եպիսկոպոս Թերզեան հեռագրաւ մը Պօլիս կանչեցաւ. կ'ըսեն թէ պաշտօնանկ եղած է. երևի արտասովոր պատճառ մ'ըլլալու է, որովհետեւ ինքը Ատանայի եկեղեցւոյն պսակեալ եպիսկոպոսն էր: Սա մարդը ասկէ քանի մը տարի առաջ Եւրօպա գնաց եւ յանուն հայ որբերուն մեծաքանակ հանգանակութիւն մը հաւաքեց 10-15,000 ոսկի կ'ըսէ: Այս երանելի վերոյիշեալ դրամը փոխանակ յատկացնելու որբանոցներու շինութեան... ազարակաշինութեան յատկացուց, անանկ որ հայ որբերը բոլ մըն ալ շտտացան: Եւ կրօնաւորները աշխարհականները միայն ենթակայ նկատելով ամէն տեսակ խաչագողութեան իրենց միայն կը վերապահեն ամէն սրբութիւն...

Կերևի թէ սուլթանը իրեն շահերուն հակառակ դատած է գերապայծառին պտոյտն յեւրօպա:

Թիւրք նաւահանգիստները Չինական պարիսպներ դարձան հայերուն դէմ: Մարդ ստոյգ գաղափար մը

կազմելու համար այն գազանային հրէշութիւններուն, որ անխղճօրէն ի գործ կը դրուին հասնող հայերուն հանդէպ, թրքական նաւահանգիստ մը գտնուելու է: Խեղճ հայեր, որոնք տարիներու երկար շարքի մը մէջ, չարաչար աշխատութիւններով եւ դժնդակ զոհանքներով կուզեն իրենց տունը, իրենց ծնողներուն գիրկը, իրենց ամուսնոյն, իրենց զաւակներուն քովը վերադառնալ, կուգան գլխիկոր, կ'աղաչեն, կը պաղատեն, ոտքերը կը պագնեն երբեմն նաւահանգիստը հսկող անխիղճ թիւրք ոստիկաններուն, բայց անօգուտ. լուտանք, հայհոյանքներ տեղացնելէ եւ երբեմն ալ վրայի դրամները շորթիլէ յիտոյ ետ կը ձամբեն: Անցեալ օր 70 ամեայ պառաւ կին մը, որ ծանր հիւանդ էր, իր պղտիկ թոններով հոս հասան: Պառաւը իր ծանր հիւանդութեան տախնապին մէջ աղաչեց, պաղատեց, դառնապէս լացաւ ըսելով թէ արդէն պիտի մեռնի բայց թող տան որ երթայ իր հայրենիքի հողի վրայ մեռնի և հոն թաղուի. բայց իլուր անցան և հոմաշիկով մակոյկը դրին ու ետ ձամբեցին: Կը խնդրեմ ըսէք մեզ, թէ մինչև ե՞րբ հայը իր հայրենի հողին վրայ մեռնելու իրաւունքէն ալ զրկած պիտի մնայ...

**Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Վ Ա Ն Է Ն**

**I**

18 փետրուար 1902

Ֆէրիզ Հիւսնի փաշայի ծայրայեղ հայատեաց մ'ըլլալը նախկին թղթակցութիւններու մէջ բաւական պարզած էր: Այս գազանը իր որդի հարիւրապետ Սէրվէթ պէյի հետ երկուեալ թշնամի մըն է հայութեան, իր մշտական զբաղումն է դաւադրութիւններ սարքել՝ կառավարութիւնը, զինուորականութիւնը եւ թէ տաճիկ ամբօրը հայերու դէմ գրգռելու համար: Զէքի փաշայի ծրագիրներն ու հրահանգներն գործադրելու առաջին կարգի ընդունակութիւններ ունի: Վասպուրականի համիդիէի գլխաւորներն իրենց համարձակ լքութեան մէջ բացարձակապէս վստահ են Հիւսնի փաշայի պաշտպանութիւնը վայելելու, եթէ կառավարութիւնը համարձակի (2) իրենց դէմ խիստ միջոցներ ձեռք առնելու, երբ հայերը յանդգնին բողոքելու:

Կուսակալի խաղաղասէր ընթացքը զինքը այնպէս կատողեցուցած է որ առիթ չի փախցնել անոր դէմ բողոքելու Մեծ-Մարդասպանին և զայն շրջապատող գայլերու վոհմակին. միշտ թէ ինք և թէ իր համախոհ համիդիէներ շուրջ կը բարձրացնեն և կը տարածեն յեղափոխականներու մասին, թէ հարիւրաւոր ֆէդայիներ անցած են սահմանագլխէն, Պարսկաստանի մէջ ահագին ուժ կայ, Վան գազանը երգով լեցած է և լին: Մի քանի անգամ հեռագրեց Բ. Դուռը և արտօնութիւն խնդրեց խուզարկութիւններ ընելու ի հեճուկս կուսակալները, թէ և չենք գիտեր ինչ պատասխան ստացած ըլլալն, սակայն երբեմն երբեմն տեղի ունեցած խուզարկութիւններ բողոքովն պարապ հանած են իր փայփայած յոյսերն ու երազները: Եր այս հայակործան նպատակի իրագործու ման կը նպաստեն իրենց դաւաճանութեամբ նշանաւոր կարգ մը ստոր հայ վաճառականներ և մատնիչներ, որոնց իբրև պարագլուխ կարելի է յիշել Չարըգճեան քէօս իբրև հայրահանգիստի կարգաւորը և Գաբամաճեան Պետրոս Աբրահամ իր եղբայրներով և Գաբամաճեան Պետրոս

իր համախօսներով: Հիւանդի հակառակութեան և ատելութեան ենթակայ են նոյնիսկ կառավարական հայ պաշտօնեաները և ոստիկանները, որոնք թէև ամէն տեսակետով հաւատարիմ կուսակալին, սակայն չեն օժանդակեր իրեն՝ իրենց լատենութիւններով և դաւաճանութեամբ: Հիւանդի հաւատարիմ հետևող մ'ըլլալ կուզէ Պահրի փաշային իր անգթութիւններով և հայը միայն աղքատ և թշուառ վիճակի մէջ տեսնել կուզէ, ինչպէս Պահրի փաշան: Ղերջնս օր մը, ինչպէս կը պատմեն, հայ մը կը տեսնէ բոլորովին ցնցոտիներու մէջ, կը դառնայ զինքը շրջապատողներուն և կ'ըսէ. »Ահա այս վիճակի մէջ պէտք է լինի բայեան, ասկէ աւելին հարամ է անոր«:

Անցեալ Բամազանի մէջ իր այս ատելութեան զոհ գնաց հայ երկրորդ կոմսար Եղիա էֆ. Գալճեան: Անցեալ տարւոյ դեկտ. 12-ի երեկոյին, Եղիա էֆէնտի Մարաթեան Մարտիրոսի հետ կաթողիկ միսիօնարներու շնորհակարարութեան կերթայ Ծնունդի առթիւ, ապա նոյն ընկերոջ հետ Շահպաղի գիւղը կերթայ, ուր իր եղբայր թահսիրտար Արշակ էֆ. հազար և մի անգթութիւններով տուրք հաւաքելու զբաղած կը լինի. Եղիա կօզնէ իր եղբոր. քանի մը հայեր ալ ինքը կը գանակոծէ և ժամը 4-ի միջոցները կը վերադառնայ նոյն ընկերոջ հետ քաղաք: Երբ Այգեստանի փողոցներէն սրարշաւ կը քշեն ձիերնին, կը հանդիպին Հիւանդի փաշայի իր դրան առջև կեցած իր որդւոյն և քանի մը ժանդարմներու հետ: Հիւանդի անմիջապէս կը հրամայէ բռնել զանոնք, երբ կը հասկնայ անոնց ով լինելը: Թանգարմները կը յարձակին վրանին. Եղիան կը բռնեն, իսկ Մարտիրոս մազապուր կը փախչէ կազատի: Հիւանդ կը հրամայէ անմիջապէս սպաննել այդ կեալուրը. հրամանը կը կատարեն ժանդարմներ քանի մը որդիներ (երկաթէ թելերէ հիւսած բիր մը ծայրը արձիճով լեցած) իջեցնելով ծոծրակին և քունքին: Ապա իր ձիու վրայ դրած կը տանին քիչ մը վար, մինչև զալիպ փաշայի դրան առջև և հոն ձիէն վար նետելով կը թողուն կը հեռանան: Գեւ արշալոյսը չճագած չափուշ մը քանի մը ոստիկաններով կը տեսնեն դիակը և կը տանեն պէլէտիէն: Երկրորդ օրը լուր տարածեցաւ թէ Եղիա էֆ. ձիէն վար ինկած և մեռած է ըստ կառավարական բժիշկներու տեղակապրին:

Ի դէպ է ըսել որ ոչ մի պարտաճանաչ հայ կարող է կառավարական պաշտօն վարել առանց ստորնանալու: Արդէն տեղական հայ կոմսարներ, ոստիկաններ և ոստիկան զինուորներ ամէնքն ալ ստոր նկարագրի տէր արարածներ են. կաշառակեր և անբարոյական: Ղերջնս իր աստիճանի բարձրացումը կը պարտէր աւելի իր կաւատութեան, զոր կ'ընէր հայ կիներ տաճիկ պաշտօնեաներու ձեռքը տալով: Իր եղբայրը Արշակ, որ թահսիրտար է բաւական ժամանակէ ի վեր, ոչ միայն տաճիկներէ վար չի մնար, այլ իր անբարոյականութեամբ և խփրփութեամբ զանոնք ալ կը գերազանցէ: Հայ ժողովուրդը համեմատաբար աւելի գոհ է տաճիկ պաշտօնեաներէ քան թէ հայերէ, որ զերեսը թիւրքէ մը աւելի հաւատարիմ ցոյց տալու համար ոչ մի ջանք չեն խնայեր: Եղիայի տեղ երկրորդ կոմսար եղած է այժմ երրորդ կոմսար Մկրտիչ: Ամէն ոք հաւատացած է որ սա պիտի գլէ անցնի իր նախորդներն իր չարութեամբ և անգթութեամբ, եթէ սակայն վրէժխնդիր և արգարագատ դաշոյնը չգամէ մէճիտիէի նշանը իր կուրծքին վրայ և վերջ չտայ անոր ազգադաւ կեանքին:

Ազգային դործերու համար չկայ այլևս այն ոգևորութիւնը, որով նշանաւոր էր Վանայ ժողովուրդը 95-96-ի դէպքերէ առաջ: Այժմ հետաքրքիր է անցած դարձածին, կարծես բացարձակ հաւատք մը դոյացած լինի ժողովրդեան մէջ, թէ այլևս կարևորութիւն չունին անոնք իր վիճակի բարւոքման համար: Գործերու ղեկը մնացած է կարգ մը հարուստներու ձեռք, որոնք երկու կուսակցութեան բաժնւած իրենց կամքին և հաճոյքին համեմատ կը վարեն զանոնք: Ղերջնս ջանք մը եղաւ գաւառական ժողովի վերահաստատութեան. սակայն շնորհիւ Գաբամաճեան Պետրոսի և Երամեան Համբարձումին (տէր և տնօրէն համանուն որբանոցին) այդ ալ ջուրն ինկաւ: Այս երկուքն կը դիմեն կառավարութեան և կը պահանջեն զայն արտօնութիւն տալու գաւառական ժողովի ընտրութեան, առարկելով թէ խռովութիւններ կրնան ծագել: Ահա կոյր ուսուցիչ մը որ ազգին գրեթէ ողորմութեամբը կապրի, սակայն իր մասնաւոր փառասիրական շահերու համար ազգին առանձնաշնորհումները քանդելու կաշնատի: Իսկ մեղի, թոյլ և փառասէր Սահակ վարդապետ (առաջն. փոխանորդ) խաղաղիկ դարձած է այս և այն կուսակցութեան ձեռք և բացարձակ գործիք կուսակալին: Առանց անոր գիտութեան ոչ մի քայլ չառնել, և նոյնիսկ չի համարձակեր բողոք կամ թագրիւր ալ գրելու եղած հազարաւոր հարստահարութիւններու համար, վախնալով մի գուցէ անհաճոյ լինի կուսակալին և զինքը պաշտպանող Բարդուղիմէոս փաշային: Իրաւ է թէ և բողոքներ և թագրիւրներ ոչ մի ազդեցութիւն չունին, սակայն այդ անամօթներն զգալու են թէ իրենց վրայ ահագին պարտականութիւն կը ծանրանայ կուռղ և բողոքող ժողովրդեան մը գոնէ բողոքի արտայայտիչը լինելու: Թող որ ժողովրդի մեծամասնութիւնը այլևս չունի նախկին հաւատքը կղերի նկատմամբ և իր ցեցերու կարգը դասած է այդ պորտաբոյծերը:

Գաւառներու մէջ հարստահարութիւններ անվերջ կը շարունակուին: Յունւարի 14-ին 130-ի չափ սպարկերտցիներ, 6-ը քահանայ, տուրքերու և բռնութիւններու խտուրթիւններուն չգիմանալով գաղթած են Վաւաշ և դիմած կաթողիկոսական փոխանորդ Արսէն վարդապետին ճար մը գտնել իրենց ցաւերուն: 25 մէճիտիէ ծախսելով 4 օրինակ հեռագիր կը քաշեն Մապէլին պաշ քեաթիպ թահսին պէլի, եպարքոսին, ներքին գործոց նախարարութեան և պատրիարքարան: Երեք անգամ ալ անձամբ Արսէն կը հեռագրէ, բայց հեռագիրներ անպատասխանի կը մնան: Ժողովուրդը ամիսէ մը աւելի է թափառական և անպատասպար մնացած հայրենակիցներու ողորմութեամբ կապրի, անգին իրենց եղբայրները և ընտանիքները դահիճներու ձեռք մատնած: Բաղէշի կուսակալութիւնը կերէի թէ Բ. Գրան հրահանգի համաձայն հարցուցած է այս մասին Գարսուս (Խիզանի և Սպարկերտի գայմագամանիստ գիւղ) և իրեն քով կանչած է Սպարկերտի միւսիր-պէկերն, սակայն անոնք տեղերէն անգամ չարժած չեն:


Սպարկերտ հայաբնակ գաւառ մըն է Վանայ ծովի հարաւարեւելեան կողմը, Խիզանի գայմագամութեան տակ: Այս գաւառի միւսիրներն տեղական քերթ պէկերն են, ինչպէս Շարիֆ խան պէկ, Քեարիմ խան պէկ, Սատուլաս պէկ, ընտրած փոփոխակի Խիզանի շէյխ Սէյա Ալի ազդեցութեամբ: Կուսակալանիստ կեդրոններէ հեռի այս գաւառը Կարկառ, Խիզան, Շնիձոր, Կեցան և ուրի





կուրի մը մէջ սպաննել երկու քրդացած հայերն, որոնք թլպատած չէին և այդպիսով հաւատացնել ամէն կողմ թէ ֆէդայիներու նոր յարձակում եղած է: Միւս կողմէն 2-300-ի չափ քրդեր զինւած, արդէն պատրաստուած են եղեր Պաշգալէի վրայ յարձակելի այդ կեղծ կուրի ժամանակ: Աեղծ ֆէդայիներու խումբը Պաշգալէի աւերակ բերդի վրայէն մէկ քանի հրացան կարձակեն. հարիւրապետ մը մէկ քանի զապթիէներով կը յարձակին անակնկալ անոնց վրայ, որոնք փախուստ կուտան, մէկ երկուքը կը ձերբակալին և գաղտնիքը երեւան կեղծ: Միւս քրդեր կը ցրւին:

Անցեալ օր ալ Օրմանեան մի հեռագիր քաշած էր հոս: Առաջնորդը մի շըջաբարկանով այդ հեռագիրը մօտակայ դիւզերու և քաղաքի եկեղեցիներու թաղ խորհուրդներուն ղրկեց: Աերջիններս թաղի երեւելիները կանչելով կարդացած և խրատած են զանոնք որ իրենց թաղերի մէջ եթէ փախստականներ գտնւին, անմիջապէս կառավարութեան ձեռք յանձնեն: Բաւական յուզում ընկաւ յեղափոխութեան հակառակորդներու մէջ մի քիչ շարժեցան, հետամուտ եղան, սկսան ասդին անդին հաշեր այս այն վախեցնել տեսնենք վերջն ինչ կը լինի:



**Ն Ա Մ Ա Կ Բ Ա Թ Ո Ւ Մ Ի Յ**

10 մարտ 1902

Տեղիս գործարանների մշակների մէջ մի խուլ իրարանցում էր սկսել մի քանի շաբաթ սրանից առաջ, որը գնալով աւելի և աւելի սուր կերպարանք ստացաւ: Մանթաշեանի գործարանի մշակների գործադուլը մի կերպ վերջացաւ, բայց միւս կողմից սկսեց միաժամանակ գործադուլ բոլոր գործարաններում: Կառավարութեան ձեռք առած բոլոր միջոցները ոչ մի հետևանք չունեցան և վերջապէս երկու օր առաջ մօտ 500 մարդ բանտարկեցին, կարծելով որ այդ միջոցով մշակ դասակարգին կարելի է յետ կասեցնել, բայց ընդհակառակը՝ այդպիսով կառավարութիւնը աւելի ևս գրգռում է և աւելի համարձակ քայլերի տեղիք տալիս: Այս շարժումը չպետք է դիտել իբրև պատահական մի երևոյթ, այլ դա երկար ամիսների ընթացքում նախապատրաստուած մի գործ է, որ որոշ ծրագրով ու զարմանալի համարձակութեամբ առաջ է տանւում: 500 մարդու բանտարկութեան առիթով անցեալ օրը մի ահագին խումբ, մօտ 1,000 հոգուց բաղկացած, առանց ձայն հանելու՝ քաղաքի մի ծայրից, ուր հաւաքւել էր, օրը ցերեկով ճիշդ ժամը 12-ին եկաւ ու ոստիկանատան առաջը կտրեց: Ոստիկանութիւնը, իհարկէ, միայն յուզւած հանդիսատես էր լինում. արգելել, ունէ բռնի միջոցի դիմել չէր համարձակուում, դպրով, որ հետևանքը աւելի վատ կը լինէր: Աերջապէս մի քառորդ ժամից յետոյ եկաւ նահանգապետի օգնականը, իջաւ կառքից և դարձաւ ամբոխին. յինչո՞ւ էք հաւաքւել ի՞նչ էք ուզում, ասացք ի՞նչ է ձեր պահանջը և ի՞նչ: Պատասխանը եղաւ. ի՞նչ ամբ ընկերներին արձակեցէք կամ մեզ էլ նրանց հետ բանտարկեցէք: Նահանգապետի օգնականը աշխատեց, իհարկէ, ամէն կերպ համոզել, որ ցրւեն, բայց չեղաւ: Ամբոխը տեսնելով, որ իր առաջարկութիւնը չյարգւեց՝ ցոյցերով և աղաղակներով և երգերով շարժւեց դէպի բանտը, որ-

պէս զի ուժով ազատէ բանտարկւած ընկերներին, բայց որովհետև ոստիկանութիւնը այնտեղ արդէն պատրաստութիւն էր տեսել, մի կերպ յաջողեց հեռացնել ամբոխին բանտի մօտից:

Հետևեալ օրը մի աւելի մեծ ամբոխ ուղղակի յարձակում է պահանջողի վրայ, ուր բանտարկւած էին ընկերները և պահանջում է, որ կամ իրեն ևս բանտարկեն, կամ թէ ընկերներին ազատ արձակեն: Ահա այդ միջոցին զորքը նահանգապետի օգնականի և մի քանի այլ աստիճանաւորների ներկայութեամբ մի-երկու զաւրով սպանում է ամբոխից, ինչպէս ասում են, մօտ 30 մարդ և մօտ 50 մարդ էլ ծանր ու թիթե վիրաւորուած: Քաղաքին տիրում է սարսափ: Բոլոր խանութները, կանտորներն ու տները անմիջապէս փակուած են: Ջորքերը ցրւում են քաղաքի զանազան կետերում, գիշերները փողոցներում շըջում են զինւորական պահակներ: Քաղաքը յայտարարւում է զինւորական դրութեան մէջ: . .

**Մ Ա Յ Ի Ս Ե Ա Ն Տ Օ Ն Ը Բ Ա Գ Ի Ո Ւ Մ**

5 մայիս 1902, Բազու

Ապրիլի 21-ին Ռուսաստանի սօցիալ-դեմոկրատական կուսակցութեան տեղական կոմիտէն առաջին անգամ Բազուում կազմակերպեց քաղաքական մի ցոյց՝ ուղղւած տիրող միապետական ուժերի դէմ:

Կոմիտէն նախօրոք հրաւեր էր կարդացել՝ ուսուերէն ու հայերէն թերթիկներով՝ քաղաքիս բոլոր բնակիչներին, առաջարկելով նրանց՝ մի կողմը թողնել աղբայնական ու դասակարգային անհամաձայնութիւնները և միանալ այդ օրը՝ բոլորին ճնշող ուժերի դէմ՝ կուսելու համար:

Ձէ կարելի ասել, թէ այդ կոչին արձագանք տւին բոլոր ազգերն ու դասակարգերը: Ցոյց անողների խումբը կազմում էին հայեր և ուսուներ. թիւրք բնաւ չկար: Այդպէս էլ սպասելի էր մի ժողովուրդի կողմից, որ կուլ տուրապէս դեռ շատ ստոր է կանգնած: Մեր հարուստ դասակարգը ևս ամենեւին չէր մասնակցում ցոյցին: Ինտելիգենտներ շատ սակաւաթիւ էին: Հրապարակ նետուած ցոյց անողները գրեթէ բացառապէս բանւորներ էին, որոնք նշանակւած ժամին (կիրակի, ժամը 12-ին) աներկիւղ բարձրացրին կարմիր դրօշակը և՝ յթող կորչի՝ միապետութիւնը՝ աղաղակներով առաջ ընթացան: Ցոյցը սկսեց հայոց եկեղեցու մօտից և շարունակեց նրա առջև ձգւող լայն հրապարակի (պարապետ) ամբողջ տարածութեան վրայ. բանւորները այդտեղ երգելով ու աղաղակելով պոռոյտ էին գործում, յետ մղելով ոստիկաններին, որոնք փորձում էին արգելել նրանց ընթացքը:

Այս ժամ չանցած՝ վրայ հասան կօզակները նահանգապետի ու ոստիկանապետի ուղեկցութեամբ: Իրարանցում: Կօզակները հետամուտ եղան բանւորներին, որոնք խուռն բազմութեամբ դիմեցին դէպի Տօրգօվյայ կոչւած փողոցը: Այդտեղ նրանց միացան բանւորական ուրիշ խմբեր, որոնք եկել էին Բալախանուց: Այդտեղ բանւորների թիւը հասաւ մի քանի հարիւրի և ցոյցը աւելի լայն ծաւալ ընդունեց: Ցոյց անողները խումբ-խումբ ցրւեցին Գիմնազիստկայա, Տատարսկայա և ուրիշ փողոցներով, միշտ աւելի և աւելի ժողովուրդ գրաւելով և

ապա միացան Բագիրովսկի սկզբերի մօտ: Այդտեղ մի անգամ ևս պարզեցին կարմիր դրօշը և ապա ցրեցին իրենց տները: Կողակները՝ գլուխները կորցրած՝ այս ու այն կողմն էին սլանում, հրհրելով անմեղ, անմասնակից ամբողին, որը սոսկ հետաքրքիր ականատես էր: Ժամը 2-ին մօտ եկաւ և հրէշներին խուժը, թէ ինչե համար — Աստուած դիտէ: Տեղի ունեցան մի քանի փոքրիկ ընդհարումներ՝ բանւորների և ոստիկանների միջև. վերջիններս դադանակի լազմաթիւ հարածներ ստացան: Ուշագրու թեան արժանի է, որ ոչ դրօշակը կարողացան խլել, և ոչ դրօշակակիրը կարողացան ձերբակալել: Մինչև այսօր էլ նա ազատ է: Պարապետի վրայ և փողոցներում ոստիկանները աշուղեցին միայն մէկ մարդ ձերբակալել: Բայց ժամը 4-ից արդէն սկսեցին գործել ժանդարմները, և երկու օրւայ ընթացքում ոստիկանութեան աջակցութեամբ ձերբակալեցին 30-32 հոգի ևս: Բանտարկւածների մէջ են օրիորդ Գօլիովա (ուսու), օր. Բարկեանց, ուսանող Լ. Բ. և Տ. Կնունեանցներ, Բէկզարեանց, Մէլիք-Յովսէփեան, ծառայող Կօզարենկօ և մի գիմնազիստ՝ Ստեփան Նաղարեանց: Մնացածները բանւորներ են, որոնց՝ գաղտնիքներ կորցելու նպատակով՝ կառավարութիւնը ենթարկում է ծեծի և ուրիշ բռնութիւններին:

Այս ցոյցը, իբրև առաջինը, դիտում են ընդհանրապէս աջող ժողովուրդը իր մեծամասնութեամբ չէր ըմբռնում իհարկէ ցոյցի բուն նպատակը: Թիւրքերը, օրինակ, կարծում էին, թէ յբռնութիւն սարքողը հայերն են, որոնք իբր թէ ուզում էին կոտորել թիւրքերին: Այդ պատճառով նրանք խանութները փակել և առընձանակներով դիւնած՝ պաշտպանողական դիրք էին բռնել: Առհասարակ այս ցոյցը հայերին են վերագրում. ոչ միայն ուսմիկ ժողովուրդը, այլ և պաշտօնական շրջանները:

Մինչդեռ, պէտք է նկատել, որ տեղիս սօցիալ-դէմօկրատական կօմիտէն ուղղակի թշնամական դիրք է բռնած դէպի Տաճկահայաստանի դատին նւիրած բոլոր հայ յեղափոխական ու համակիր ուժերը և նոյնիսկ դէպի այն հայերը, որոնք համակրելով հանդերձ ներկայ շարժումին Ռուսաստանում, չեն մուսնում դնել միաժամանակ և զուտ ազգայնական պահանջներ, ինկատի ունենալով, որ մի ընդհանուր սահմանադրական կառավարութիւն, որպիսին պահանջում է ռուսական Սօցիալ-դէմօկրատիան, դեռ ևս չի երաշխաւորում մանր ազգութիւնների ազատ ու ինքնուրոյն զարգացումը: Ռուս Սօցիալ-դէմօկրատիայի բռնած այդ դիրքը կը նպաստէ այն հանգամանքին, որ Կովկասում և մասնաւորապէս հայերի մէջ կը ստեղծուի մի առանձին կուսակցութիւն, որի նպատակը կը լինի՝ հետապնդել կովկասեան ազգութիւնների ինքնուրոյնութեան: Եթէ այդպիսի մի կուսակցութիւն մինչև օրս առաջ չի եկել, դրա դիւսաւոր պատճառներից մէկն էլ անտարակոյս, տաճկահայոց շարժումն է, որ վաղուց ի վեր կըսնում է կովկասահայ յեղափոխական ուժերի մեծագոյն մասը:

**Գ Ո Ր Ծ, Ո Չ Խ Օ Ս Բ**

(Մի անգ ՂԱՍՊՈՒՐԱՍՆԻՅ)

26 մարտ 1902

Ամէն անգամ որ երկրի մէջ ուէ կէտի մը վրայ յեղափոխական կարևոր ձեռնարկ մը կը կատարուի, և

կամ դէպք մը տեղի կունենայ, արտասահմանի հայութեան մէջ յուզում մը և մեծ իրարանցում մը առաջ կուգայ և ընդհանուրին ուշադրութիւնը կ'ուղղուի դէպի երկիրը և յեղափոխական գործը: Մինչև անգամ այն թմրած ուղեղները ու տկարացած սրտերը, որոնք երկար ժամանակ լուռ ու անտարբեր կը մնային յեղափոխական քարոզներուն, և սկստիկ շարժումներով կը պատասխանէին իրենց եղած դիմումներուն՝ կատարած հերոսական, իրողութեանց առջև յեղակարծօրէն կը ցնցին և վայրկենական խանդավառութիւնով մը կը լեցնին, անշուշտ մերձաւոր շողջողուն, յաջող ազատագրութեան մը յոյսերով դիմովցած:

Բայց շատ կարճ կը տևէ ոգևորութեան այս շրջանը, ու յաջողութեան օրերուն երբ կը յաջորդին դժբախտութիւնները, երբ մեր հարցը դիւանագիտական ձախողած մը կը կրէ և կամ երկրի մէջն ու դուրսը յեղափոխական զեղծում մը նշմարուի, կը դադրին, կը մարին այդ վայրկենական խանդոտ ծափերը, երկրի ներսը նպաստ հասցնելու փոթկոտութիւնը ու նորէն երկրի մէջ գործիչն ու գործը մինակ կը մնան իրենց անապօրոյն թշնամիին և անհամար դժուարութիւններու հետ:

Եւ ինչ որ աւելի գէշն է, այդ քաջալերող, նպաստող կարճատև շրջանին կը յաջորդեն անվստահութեան ցաւաբար ցոյցեր, հայհոյութեանց կոյր, յիմար արշաւանքներ:

Ասի սովորական առաձիգ երևոյթ մըն է և բնական դարձած մեր յեղափոխական թէև կարճ, բայց տաժանելի շրջանին համար:

Պէտք կայ որ այս ըսածներս հաստատելու համար դիմեմ փաստերու, դեռ շատ մօտիկ է մեր անցեալ տասնամեակը: Ամէն դե ծանօթ է մեր յեղափոխական անցեալ գործաւնութեանց և ուզող կրնայ ինքնին թիթեակակնարկ մը նետել անոնց վրայ ու համոզուի, եթէ երբէք հարկ կայ, տասնեակ թերթեր ունինք արտասահմանի հայութեան մէջ, որոնք իրենց կարճ ու երկար կեանքին մէջ իբրև հայելի անկեղծօրէն կը ցոլացնեն մեր ժողովուրդի այդ բնորոշ ոգին և միշտ երէկի պաշտածը այրած է յաջորդ օրը:

Առանց հոգեբանական վերլուծութեանց դիմելու, գտնելու համար միկրոնները մեր ժողովուրդի փոփոխամտութեան, անոր հայրենասիրական խանդին բարեխաւնութեան արագ ելևէջին, կ'արձանագրենք միայն տխուր երևոյթը, որ իր առաձգական բնաւորութեամբ կը թուներակէ գործին սրբութիւնը և կը խանգարէ անոր յարատև յառաջդիմութիւնը:

Մենք երկրի մէջ գտնուողներս երբէք վախ չունինք արտասահմանի հայ զրջակներէն. մէկ նպատակ միայն ունինք, այն է՝ օր առաջ վերջ մը տալ հայ ազգի կրած անլուր տառապանքներուն և տեսնել զանի ազատութեան ձամբուն վրայ:

Թող գրեն ատոնք, թող իրարու միս ուտեն...

Ամէն բանէ առաջ մենք պէտք ունինք ժողովուրդին, հայ ազգի ամբողջութեան, անոր նիւթական և բարոյական օժանդակութեան, յաջողելու համար մեր նպատակին մէջ:

Հոս հայրենիքին մէջ ժողովուրդին հետ ենք միշտ. ան բացարձակ հաւատք և վստահութիւն ունի մեր վրայ, իրաւ է, կրեմն ան ալ ցաւի, գայլոյթի վայրկեաններ իրաւ է, կրեմն ան ալ ցաւի, գայլոյթի վայրկեաններ կունենայ մեզի դէմ, իր ցաւագին օրերուն մէջ, բայց երբ կը տեսնէ մեր թափած քրտինքը և արիւնը, երբ մի քիչ

մը թօթւէ իր վրայէն վտանգին պատճառած սարսափները, կը գտնէ շուտով ինքզինքը և նորէն կը միանայ մեզի հետ:

Անոնք որ չեն համակերպիր կամ հանիր ներկայ գործունէութեան եղանակին, անոնք որ ունին աւելի լայն և օգտաշատ ծրագիրներ, և օժտած են բարձրագոյն կարողութիւններով և անկեղծօրէն փափագ ունին հայրենիքի դատին ծառայելու, թող վազեն երկիր: Մենք հոս պատրաստ ենք գրկաբաց ընդունելու զիրենք և ձեռք ձեռքի տւած համերաշխ գործելու: Թող գան, արգէն երկրին մէջ ահագին պահանջ կայ ձեռնհաս, զարգացած և համբերատար գործիչներու:

Հայկական այս ճգնաժամուն, օրհասական այս բուռններուն մէջ, երբ անճկական մասնակի կոտորածները, քրդական աւարառութիւններն և ասոնցմէ պատճառած հայ ժողովուրդին գաղթումները և բարոյապէս անկուճը աստիճանաբար հայկական հարցը կը պայտանան խեղդել-ցեղին վերջնական հատումմին մէջ, յեղափոխական գործունէութիւնը միակ կենսարար կրակն է, որ կ'երկնայ, կը ճիւղաւորի հայութեան մէջ և կը պահպանէ զանի վերահաս վտանգէն...

Հերիք է՝ մեր անմահ նախորդները, մասնակի, հակիրճ ուժերով զննած՝ զո՛հ տւին իրենց անգին կեանքը, հերիք է հայրենիքի հայութիւնը մատաղ աւառ իր մատաղահաս կոյսերը և անտիական պատանեկութիւնը, ալ հերիք են մեր քաջածանելուր տուայտանքները, եկէք զօրավիգ եղէք մեզի, կեցէք մեր կունակը և կամ անցէք մեր առաջը, զինեցէք մեր զննարներու դարտակ ձեռքերը ու միասին միասիրտ մղենք վճռական կռիւը մոլեգին ու յամառ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

1902 ինտուար 1 Աղթամար

Ամենապատիւ Ս. Մ. սրբազան Արքեպիսկոպոս

Ազգախնամ պատրիարք հայոց Թիւրքիոյ  
ի Կ. Պօլիս

Հինգ օր առաջ 64 նոմերօ հեռագրու յայտնած ենք Ամենապատիւ Հայրութեանդ Սպարկերտ գաւառի 25 հայ գիւղերու, 2 վանքերու քահանայից և ժողովուրդեան Վաթողիկոսարանս դիմելը, ներկայիս պէտք համարեցի մասնաւոր տեղեկութիւն մը տալ այն հարստահարութեանց վրայ, որոնցմով այս թշուառ ժողովուրդը հարկադրւած է ձմեռան այս ցրտաշունչ սառնամանեաց և ընունային ճամբորդութեան մ'ա հաբեր դժարութեանց ենթարկուիլ իր ընտանիք և զաւակներ զիրենք յափշտակող գաղանաց ճիրաններուն մէջ թողուլ և դիմել այլուր մուրալու, տառապելու իր պէս թշուառ, սնանկացած ազգակիցներու դռներ, կրելու այս պայմաններուն: քնական, ծանօթ նեղութիւններ, լալու և բողոքելու իր աննկարագրելի վիշտերը:

Սրբազան հայր, գիւրին է երևակայել մեր այլ մտքի և կարողութեան տկարանալն ի տես այսպէս աղէկարը սեսարաններու, զի կը վարանիք և չենք գիտեր ասոնց վիճակի ո՞ր մէկ մասն հաղորդենք Ձերդ բարձրաշնորհ հայրութեան, միայն քանի մը նմոյշներ և օրինակներ թւենք որ գաղափար մը տան ընդհանուր հարստահար

ութեանց և իրենց առօրեայ կեանքին, որմէ մահը աւելի նախնորելի և արդիւնքն է:

Ա) Նոյն գաւառի միւտիրը բնիկ քիւրդ մ'է և որով կառավարական ուժը միացած կը լինի քրդական ազդեցութեան, և այս կրկնակ զօրութիւնն է մայր ամէն անլսելի չարեաց ու կեղեքմանց և որով այս դրախտանման գաւառն ալ օր աւուր կը դատարկանայ հայ բնակչութեան:

Բ) Այս քիւրդ միւտիր Բէրիմ պէյէն (ընդհանուր կեղեքիչ) իզատ կան նաև շատ մը պէյեր, յորս միւտիրն մրցակից են Շարաֆ խան և Սադուլահ խան պէյեր և այլքն, որոնք իբրև զատ իշխանութիւնք կը տիրեն զանազան գիւղերու և իբրև միւտիրն ցեղակիցներ ու համազօր պետեր առանձնաշնորհեալ են ընել ինչ որ ուզեն: Տուրք հաւաքելու համար ամէն մէկ պէյ իր խօլամներով իր ազդեցութեան տակ եղած գիւղեր կը խուժէ իբրև ոստիկանապետ, միւտիր և ամենայն ինչ, ու քսամներ տանջանքներով կը գանձեն տուրք, ժողովրդի կենսական պէտքն, ոգեպահիկն հանելով, և իբրև վարձք իրենց բարբարոսութեան, հաւաքածին մեծ մասը գրպանելէ յետոյ, մնացեալը անւանական միւտիրութեան սնտուկին կը տանին, առանց հաշիւ մը նշանակելու: այնպէս որ այս գաւառի բնակիչներ չեն կրնար դիտնալ թէ ի՞նչ է տարեկան տրոց օրինաւոր գումար, ի՞նչ են վճարած և ի՞նչ պարտին:

Գ) Իւրաքանչիւր պէյ ամէն մէկ եղանակին յատուկ եղող գործերով կ'աշխատցնէ իր հպատակ գիւղի ժողովուրդ իրենց ցամաք հացերով և այսպէս ամէն մարդ ժամանակ չունենար իր գործերը ընելու, միշտ զբաղած լինելով անգութ պէյին անհատում՝ օլամներով, զուպարներով և ստրկական ծառայութիւններով:

Դ) Պէյեր իրենց բազմութիւ ոչխարներ կը ցրեն հայերուն վրայ սնուցանելու և խնամելու ամբողջ ձմեռ:

Ե) Պէյեր այս հայ գիւղերէն ազատ են առնել և կառնեն ինչ և որչափ որ իրենք ուզեն. հայեր իբրև ստացածք ժառանգ կը թողուն իրենց որդոց և դրամով կը ծախեն իրարու. իրենց կը համարին հայու կեանքն ու ամէն ստացածք, աշխատութեան արդիւնքն, կինն ու աղջիկն, և եթէ անոր կեանքը և անոր քրդտիներէն մասնաւոր բաժին մը, տգեղ կին մը և ըն թողուն անոր հայուն՝ այն ևս շնորհք կը հաշիւն և այնպէս կը հասկցնեն:

Այս խժդժութեան քանի մը օրինակներ: Հիւղանդ գիւղէն Շարաֆ խանի խօլամ Փերէն անցեալ տարի, ըստ նախնի սովորութեան, երեք ջորաբեռ ցորեն, 2 թօփ շալ, 8 զոյգ գուլպայ և իւրաքանչիւր ամուսնութեան մէկ մէճիս տուրք առած է:

Վերին Հուրուկ գիւղէն Վըշայ Խարօս տարւէ տարի 7 արասի չափ ցորեն, ձեռք մը զգեստ, զոյգ մը սօլ, 10 զոյգ գուլպայ, իւրաքանչիւր աղջիկ տանելուն մէկ մէճիս տուրք կառնէ ու տեղացիներու 150 ոչխար և եզ մը տանել կուտայ այս անցեալ աշուն:

Վերին Ատեսնց գիւղէն Շարաֆ խան պէյ 9 չափ ցորեն, կօշիկ, տարբեր ուտելիքներ ամէն տարի առեր է, ուրիշ տեղեր աշխատելու գացող մէն մի վերադարձողէն մէկ ոսկի, գլուխ մը շաքար կառնէ, թէև ոսկի մը միայն լինի իր կարծ պանդխտութեան վաստակն:

Ճաժվան գիւղէն՝ Բէրիմ խան պէյ տարին 12 չափ ցորեն, 100 զօշ, գրամ, կօշիկ և հանդերձ, պանդխտու

Թե՛նէ վերադարձողներէն ըստ վերնոյն կառնէ: 1901-ին Մարտոյի կին Փէրօն բռնի յափշտակեց:

Աւ-քար գիւղէն Բէճուր և Քէրիմ խան պէյեր 6 չափ ցորեն, պանդուխտներէն նոյնպէս առին, 110 ոչխար տարին հոփուն ալ սպաննեցին և 20 չափ ցորեն արտին մէջ վառեցին:

Բաղինց գիւղէն Խուրշտ պէյ նոյն գիւղի սեփական ընդարձակ դաշտավայր և գաղթողներու կալածներ ամբողջապէս գրաւած է:

Ներքին Ատենց, ուր 3 տուն միայն հայ մնացեր են, յետին ծայր թշուառ, Շարաֆ խան պէյ տարին 4 չափ ցորեն, 60 զրշ, հանգերձ և կօշիկ կառնէ:

Ներքին ուր մէկ տուն մնացեր է, Շարաֆ խան պէյ և Արշայ Ապտօն տարին 3 չափ ցորեն, 20 զրշ, կօշիկ և այլն աւեր են:

Տալարս՝ Արշեցի Այսոն հայ կին մը կրօնափոխ ընելով աւեր և այդ տան բոլոր կալածներ գրաւեր է. ուրիշ տուն մը այրերէ այս աշնան, ուրիշ 2 տուներ հալածեր է և նորա գաղթած են: Հարկին գիւղէն Քէրիմ և Շարաֆ խան պէյերը կառավարական տուրք հաւաքած տան Տօսուէն և Տալարսէն հինգական մէծիտ, ուրիշ գիւղերէն նոյն համեմատութեամբ, համագումար 32 ոսկի կաշառք առած են, նազ բարբարոսութիւն ընելու խոստմամբ: Մնացեալ գիւղերուն ալ հարստահարութիւններ այսպէս են, զորս մի ըստ միովէ գրել երկար պիտի ըլլար: Ահա Ս. Հայր այս դժնդակ կացութենէն ստիպեալ, դաւառէն 200 հոգի Գաւաշ և մաս մըն ալ Մոկս մնացած կը թափառին, որոնց բոլոր խնդիրքն է ունենալ օսմանցի դպրոցական, բարեկիրթ միւստի մը ու այսպէս ազատելով քրդական անտանելի ազդեցութիւններէ վայելեն օսմ. մեծագոր կայսեր հովանիքն ու պաշտպանութիւն. առ այս թէ և շատ անգամ դիմում եղած է կուսակալութեանց, բայց միշտ ապարդիւն և ուստի այս անգամ դիմումներ ուղղուեցան Բ. դրան և ներկայիս ալ նորէն Ձեր ազգախնամ հայրութեանց որ բարեհաճիք ի սէր Աստուծոյ դարման մը շնորհել այս անմուռնջ զուարակ ժողովրդեան, որով կարենան իրենց տեղեր հաստատուիլ աղօթքներ ընելու Օգոստ. Այսեր կենաց և Ձեր Ամեն. հայրութեան:

Կաթ. տեղապահ տանն Աղթամարայ ԱՐՄԷՆ վարդապետ

ՆԵՐՉԱԿԱՆԵՐԷՆ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՍԱԾ

ԽՆԳՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄԻ

28 օգոստոս 1901

Գերապատիւ Ս. Հայր,

Նախա՞ Ս. գիւղի է՛ն յարկեցիկ և երեւելի գերապատանի շառաւիղներէն ըլլալով, ժամանակի դժնդակ պարագայից և ջրուր աղաներու հարստահարութեանց ու կեղեքումներու ընդմիջ, զրկեցայ ամբողջ հարստութիւնէս, լծկան կենդանիներէս, մեծաքանակ արմախք ներէս ու ճօխ կաշկարասիներէս: Մեր գիւղին ազան Ս. Պ. անյայտ տղուկի պէս քամիով հարստութիւնս ու արիւնս, քայքայեց ընտանեկան շէն օճախս: Միջին դարու աւատակալութեան գրութեամբ զիս իրեն գերի և սարուկ դարձնելու նենգամտութեամբ հայէս զրկեց և յետոյ իրր այն թէ, ի զուրթ շարժեալ իմ վրաս, 500 զրշ-ի փոխառութիւն ըրաւ ինձի յարեարտաբար (պ),

Հաղիւ երկու տարի անցնելուն՝ իր պահանջն 1,200 զրշ-ի յարձրացուց, եւ որովհետեւ իմ կարօտութիւնս ծանօթ էր իրեն, հիսակ իմ ընտանիքս դրաւի տակ առած, զիս սպաննել տարու դիտարութեան ունի, 150 ոսկույ արժողութեամբ հողակալածներս գրաւելու և 16 տարեկան սիրունիկ ու մատղաշ աղջիկս խլամացնելու եւ իր պաղտա կրից ծառայեցնելու վատ դիտարութիւն ի սէր Աստուծոյ, շնորհք ըրէք միջոց մը յոյց տալ ինձի, որով կարողանամ ազատուլ ընտանիքս, պատիւս, աղջիկս վատ դազանին ճիրաններէն:

Համարելով Ձեր Ս. աջն

Խոնարհ ծառայ

\*\*\*

Գ... 7 նոյ. 1901

Գերապատիւ Ս. Հայր,

Յաւ. ի սիրտ կը յայտնեմ Ձեր Գերապատութեան թէ, Ձ.-ի գայտապան իր քննական պատգամն առթիւ. Ռ. հանդիպելուն՝ հոգիէ ծանուցած է մեզ 15 օսմ. սակի պատրաստել և գլխէք, իրր տուրք: Պահանջած 15 սակի 5-6 սակին մեր մօտակայ աւերակի մը կալածական տուրքն է, իսկ մնացեալն մեր գիւղէն տարիներ առաջ, աղքատութեան պատճառաւ գաղթող-հեռացուներու պարագնս վերադառնալ աւերակին մեծ մասը տարիներ է ի վեր կը հերկին ու կը ցաննն Պ. գաւառակէն 2-3 մասմէյական ազաներ, վախեն չենք կրնար ինչ-չինչ կառավարութեան որ տուրքն աղաներէն դանձ ի ըստ օրինի Բայց օրէնքին մտիկ ընողը ս՛ղ, կրր գաղթողներու պարագնս ալ մեզնէ կը պահանջ ի օրէնքի պաշտօնաներու կողմէ: Ճարահատեալ մեր անդաւանական ստիպանքն և սան պաշարներն ծախելով պիտի յճանք մեզնէ պահանջած 15 սակին և գիւղ լքանելով պիտի յյր ինք ի խնդիր հայրի Արեւօք կարելի չէ թ ա գ-ր ի ը ս լ մը պայտապամ պէյին բարեկիրութեան ու խղճին կոչում ընել:

Համարելով Ձեր Ս. աջն

Մնամ խոնարհ ծառայ

Գիւղապետ Գ.-ի

\*\*\*

Պ... 11 նոյ. 1901

Գերապատիւ Ս. Հայր,

Ստորադրեալքս՝ Պ. գաւառակի ազգայիններէն ըլլալով, կը փութանք հետեւեալ խնդիրն Ձեր ուշադրութեան յանձնել:

Գրամատոյց Ս. Կ. ազգայինին դեռատի կինը սկստ 15-ին Խ. աշիրէթէն (Ռ.-ի եօթն տոնայիններէն մին) Բ. գիւղի Ռ. անուն քիւրդի մը կողմէ կ'առեւանդուի: Կինը երկու ամսէ իվեր Ձ.-ու շէյս Ա.-ին ինքնուրոյր տարած է: Ս. իր ամբողջ ինչքն ու ստացածքն, իրր 12,500 զրշ. կաշառելով, կառավարութեան կը դիմէ, անօգուտ Սչիթէթիտու զլիաւորներուն, շէյսերուն կը դիմէ, բայց ի դերեւ կ'ենեն իր ճիգն ու աշխատանք և ամէն գոհողութիւն:

Եւ այսօրեան օրս օրան սեւ հացի կարօտ, անպատասպար մնալով. Ձեր գերապատութեան կը յանձնարարենք զայն, որ պէտք եղած օրնութիւնն ընձուէք: Նմա և մօտակայ քաղաք մը զրկէք, ապահովելով իր կեանքն, որ այլուս վստայի տակ է մեր գաւառակին մէջ:

Համարելով Ձեր Ս. աջն

Պ.-ի գիւղապետ Ծ.-ի գիւղապետ Պ.-ի գիւղապետ

\*\*\*

Պ. քահանայ

\*\*\*

Պ... 18 նոյ. 1901

Գերապատիւ Ս. Հայր, Ձեր գերապատութեան ծանօթ է արդէն շրջակայքս

դոն ող Բ-երուն եւ ի մասնաւորի Բ. աշխրթին պետ Պ.-ին եղբորն ճ.-ին մեզ ըրած բնութիւններուն եւ հարստահարութիւններուն երեսն մեր քաջած ստուարանքնին եւ մեր արդի ցաւայի ու դառն կայութիւնը Անցեալները Պ.-ի Ա. պէկին հրամանին վրայ Ջ. զայցինք, փշեալ երկու ազաւ եղբայրներու մասին ստոյգ վկայութիւն սալու համար Բայց կառավարութեան թող ու ձեւական ձեռնարկներուն ստոյ ու սոցարդուն վիճակին վրայ քաջապէս համարած ըլլալով. սչինչ պատասխանեցինք, ապագայ փորձանքէ մը ազատ մնալու համար Աղաներն հօրսոցն են քան զկառավարութիւն:

Այսօր եւս փոխա Ռ. էֆ. ինդիրն իրական ու ճշգրիտ գոյներովը ստուգելու համար Ռ. եկած է, պէտք եղած հարցապնդումներն ընելով: Բայց եկել տես որ Ռ. էֆ. իր կեանքն վտանգի սակ չընկու համար, Ռ. գալէն առաջ, խնդրոյն առարկայ եղող երկու եղբայրներու իրենց գիւղերու մէջ կ'այցելէ եւ երկուքն ալ հեան միասին սանկով զիւզէ զիւզ կը պատի հարցաքննութեան Այ անշուշտ կրնայ մակարելիլ թէ, ոչ թէ միայն Ռ.-ի այլեւ ամբողջ Գ.-ի գուռառակին մէջ չպիտի դանուէ հոյ մը, որ յանդէնի այս երկու բնաւորներուն աննպատակ կայութիւն մը սալ, իրենց ներկայութեամբ մանաւանդ, քանի որ, բերան բանալուն հետ, խանչէրի հարւածն ալ մէկ պիտի ըլլայ անտարակոյր Անցեալ ամառ յիշեալ բունկալին (Պ.-ին) Ա.-ցի Ս.-ին հետ ունեցած ընդհարումներուն ատեն, ստորագրեալներէն Մ. Մ. Գ.-եանի մէկ մասակ ձին եւ ջորի մը փախուցած ըլլալու ինդիրն միայն Ա. պէկին բացած ենք եւ ուրիշ ոչինչ: Բացարձակապէս մեր ակն ու ոխն բացարեղու կամ պարզելու անկարող կը գտնուինք եւ պիտի գտնուինք, զորչափ ատնք (աղաներն) սանձարձակ եւ չձերբակալւած ըլլան ու մնան:

Ա՛րդ Ս. Հա՛յր, կառավարական ձեռնարկներէն (աղաներն ձերբակալելու մասին) բողոքովին յուսակտուր եղած՝ Ջեր Գերսպատութեան կը գիտնեք, թախանձազին խընդրելով որ բարեհաճիք մեր այժմու դառն ու ցաւալի կացութեան արձագանքն ըլլալ Ամեն Սրբ. Պատրիարք հօր եւ Կեդր. Պատկ. Ժողովոյն, որոնցմէ միայն յիշեալ աղաներու ձերբակալուիք կը խնդրենք ու կը յուսանք տեսնազկին Գաւառակին աղբայրներու հանդուսութեան համար կարելին ընելու ճիշդ ու ջանքն խնդրելով Ջեր Գերսպատութիւնէ:

Մ'առք խնարս ծառայք.  
 Տ-ցի                      Ռ-ցի                      Հ-ցի  
 Գ. Օ.                      Օ. Մ.                      Մ. Դ.  
 (Կնիքներ)

Օ Ր Մ Ա Ն Ե Ա Ն Ի    Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը  
 Վ Ա Ն Ի    Հ Ա Յ Ո Յ    Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Գ Ի Ն

Կիմանանք որ սամանեան սահմանազլիսի գծին վրայ հայ խոռվարարներու շարժումներ կան, ուստի զգուշացուցէք կանխաւ մեր խաղաղասէր ժողովուրդին այդ բախտանդիր խոռվարարներէն եւ յայտարարեցէք որ սոյն վնասակար գործեր ձեր շահերուն եւ գաղափարներուն դէմ են:

1902 մարտ 16  
 Պատրիարք  
 Մարգարիտ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Խ Ա Չ Ի Կ Ա Ս Լ Ա Ն Ե Ա Ն  
 (ԿՈՐԻԻՆ, ՏԻԳՐԱՆ, ԱՆՏՕՆ)



1878—1901

Նահատակւած 1901 թ. յուլիսին յայտնի ընդհարումն մէջ որ տեղի ունեցաւ Աղբայրացիի մօտ հայ-մակեդոնական խմբի եւ տաճիկ զօրքի միջև:

Ոչ որ չէր յուսար որ թիւրք շօջանի մէջ մեծացած, թիւրքերի թաղերին մէջ բնակած եւ ընդհանրապէս թըրքասէր ճանաչւած սափրիչ Ստեփանի որդին, կարող էր երբեկցէ կատաղի յեղափոխական դառնալ, բայց թիւրքիան, այդ տեսչային ու հիւանդ երկիրը այդպիսի անակնկալներ մի ձոխ խառնարան է. երեկւայ անտարբերը այսօր թունդ գործիչ է դառնում, թըրքասէրը՝ ազգասէր, յեղափոխականը՝ մատնիչ, լըտեսը յեղափոխական, որոնք գոյութեան կուրի մէջ միշտ իրարու հրահրելով, առանձին կրակ են տալիս յեղափոխական Ոգուն, որը առկայծում ու թափանցում է ամենամանձամթ, ամենամութ անկիւններն իսկ:

Այդ ջերմ Ոգին էր որ Խաչիկին 14 տարեկան հասակում բերաւ միացուց իր հասակակիցների խմբակին. յեղափոխական կատաղի սգին էր, որ երբ 1895 թ-ի օգոստոսին Տրապիզոնի կոմիտէն խմբերին առաջարկեց

կոտորածների «կոմիսար» Շաքիր փաշային զիմաւորել գնդակներով, դուրս բերաւ Միսակին և Խաչիկին իբրև տէնօրիստների: Աճիւրը պիտի գործագրուէր սուլթանի գահակալութեան տարեգրածի գիշերը, բայց կարգադրիչ խումբը ինկատի ունենալով որ քրիստոնեայ երկսեռ հասարակութիւնը մեծ յաջողութեամբ զբօսեցուէ դուրս գալիս, իսկ թիւրք խուժանը զինւած ու գրգռւած է լինում նոյն գիշերը, վերջին րոպէին, կոմիտէի առաջ ամէն պատասխանատուութիւն յանձն առնելով՝ չգործադրեց վճիռը, միւս օրւան յետաձգելով: Շաքիր փաշա առաւօտ շատ կանուխ մեկնեցաւ, կորիւնները անհամբերութիւնից կատաղել էին, կառքով սլացան ետեւից մինչև Յէյրի-մէնտէրէ, անկարող եղան հասնիլ:

Մի ամբողջ տարի էր անցել Սասունի կոտորածից հայկական խնդիրը սկսել էր մոռացուիլ, եւրօպական գիպլօմատիան մատ մատի չէր խփում... Մինչդեռ Հայաստանի մէջ չարագործութիւնները չէին դադարում, եղեռնագործ փաշաները նորանոր շքանշաններով ծանրաբեռնուած՝ փառաւոր շրջագայութիւններ էին կատարում Պօլսից դաւառ, դաւառներից Պօլիս, երազուն, յուսալից հայրութիւնը հիպոթափուում, անհամբերութիւնից Ֆըշ-Ֆըշում էր, ունէ գ ո Ր ծ թ Վ Բ Ո Ղ Պ ք յայտնելու պահանջը ընդհանուր էր, Շաքիր փաշան նոր խուսափել էր, երբ Տրապիզոն հասաւ Անի արիւնարբու Բահրի փաշան, ահագին հարեմով խրոխտ ու սեգ. հարկաւոր էր Հայաստանի դրան շէմքին հայ ժողովրդի բողոքը արտայայտել հէնց այդ գուրգուրուած գազանին վրայ: Երկու կորիւնները թախանձանքով միայն կոմիտէից կարողացան տէնօրի գործը ստանձնել: Այլևայլ պատճառներով՝ կատարումը յետաձգեց մինչև 95 սեպտ. 20-ը: 'նոյն օրը՝ չորեքշաբթի Բահրին զինւորական պատիւներով՝ գնաց իտալական շոգենաւը, որի մեկնելուց քիչ առաջ Բահրին մի հեռագիր ստացաւ Պօլսից, նա դուրս եկաւ ափը, իբր թէ շոգենաւին չէր հաւանել, բայց յետոյ պարզեց, որ սեպտ. 18-19-ին Պօլսում տեղի է ունեցել Պապը ալի ցոյցը և կոտորածը: Երկրորդ Տրապիզոնի վախին և հրամանատարին վրայ կատարեալ հաւատք չունենալով, հրամայել էր Բահրին հրահանգի սպասել... անշուշտ կոտորելու համար:

Բահրին, հրամանատար Ֆէրիգ փաշայի ու պարսկական թրքամուլ հիւպատոսի ընկերակցութեամբ և հետևորդներով վերագառնում էր շոգենաւից մեծ ճանապարհով միանելու 1-1 1/2 ժամ կար, Խաչիկ և ընկերը Զէյթին լիքի փողոցից դուրս եկան և սկսան գնդակ տեղացնել Բահրիի վրայ, ամէն կերպ աշխատելով միւսներին չճախարհել այդ հանգամանքը և տեղի շատ մօտիկութիւնը արգելք եղան ձեռնարկի կատարեալ յաջողութեան և Բահրին ազդրից, Ֆէրիգ փաշան սրունքից միայն վերադարձան. վերաւորաձեռները սկսան տապալկիլ փողոցի մէջ և օգնութիւն պօռաւ իսկ հետևորդները հալածեցին տէնօրիստներին, որոնք փամփուշտները նորոգելով կարողացան կուելով փախչիլ և զապթիէների քթի տակից անյայտանալ: Յարձակումը այնքան յանդուգն և միանախառնալ էր, որ անհամար հայերի կողմից այնքան անյուսալի էր, որ անմիջապէս կարծիք կազմեցաւ թէ պաշտօնաթող զինւորների կողմից է, երբ յայտնի խաչագող Գէորգ Խաչիկի-ձեան մի քանի զըշ ձեռք բերելու և մասամբ վնասելու խնդրութեան համար, վազեց մասնեց, որ հայեր են և այսինչ այսինչներ: Ամենախիստ խուզարկութիւններն ու

տէնօրիստների ազգականների բանտարկութիւնները ոչ մի հետևանք չուրին: Տղայոց սառնասրտութիւնը փրկած էր իրենց: Երկու օր յետոյ՝ սեպտ. 22-ին գիշեր կառավարական թելագրութեամբ թիւրք ամբողջ մօտ 6-8,000 հոգի զինւած դուրս եկաւ հայոց թաղերը կողոպտելու և սպանելու, բայց տէնօրի գործողութիւնը այնպիսի մի սարսափ էր ձգել նրա վրայ, որ մի երկու հայ տնից թէվօլվէր արձակելը բաւական եղաւ նրանց հեռացնելու: 'նոյն իրիկունը կորիւնները տեղափոխուում էին առանձինն, երբ 20 հոգիւնց մի թիւրք խումբ վրայ ինկաւ և ճանչնալով նրանց՝ սկսաւ հալածել: Երկու պատանիները ամբողջ մի ժամ նրանց հետ ճակատ առ ճակատ յուսահատաբար կուելուց յետոյ, կուրուսին իրար... Մ: մի տուն ապաստանեցաւ, իսկ Խաչիկ թաղից թաղ նրանց հետ գլուխ դնելով՝ ծանր կերպով վերաւորեց Թալաճի օղլի Սապրի պէյ յայտնի սրիկային, որ 3 օր յետոյ արդէն գնաց Մահմէդի ձէննէթը: Թիւրքերը փախան և Խաչիկ բախտի բերմունքով գտաւ իր ընկերոջ: Այս երկու 17 տարեկան պատանիների հազար ու մի վտանգներից ազատելը, նոյնիսկ կոտորածի ժամանակ և նրանից յետոյ՝ եթէ մեծ մասամբ արդիւնք էր ժողովրդի համակրութեան, մասամբ էլ իրենց ցոյց տուած հեղուկութեան և քաջասրտութեան, այնպէս որ թիւրքերը սկսան առասպելական նշանակութիւն տալ նրանց անձնաւորութեան և զէնքերին. այնքան խաբէբայութեամբ սարքած կոտորածը արել վերջացրել էին. մնացած այր մարդիկ բանտերն էին ձգուած: Մի ամիս անցել էր, բայց ամենախիտ թրքական թաղերում բնակող կառավարական յայտնի պաշտօնեաներն անգամ, քարերով, կոճիքով ամրացնում էին իրենց տան դռները, որովհետեւ երկու տղայքը դեռ ողջ էին: Մի կատի ցատկոտուր, արդէն միւս օրը զնոյցի առարկայ էր դառնում թիւրք կանանց մէջ, «թէ տղայք այս գիշեր մի տանիքից անցան»: Գիշերային պահապանի աչքին թւում էր, թէ «տղայք մօլլայի հագուստով այս ինչ տունը մտան»: Խուզարկութիւնները, ոստիկանական շրթանները հաստատում էին բանդագուշանքներ միայն լինելը: Գաւառական մի քաղաքում, օր ցերեկով մեծ ճանապարհների վրայ փաշաների վրայ յարձակում գործելը և նոյնիսկ կոտորածներից յետոյ չձերբակալիլը այնքան վերաւորական թւաց թիւրք կառավարութեան և ամբոխին, որ Բաթումի մէջ մահմէդական բեկերը, թիւրք հիւպատոսի թելագրութեամբ՝ յատուկ դաւադրութիւն էին սարքել տղայոց Ռուսաստանում գտնելու և տեղի ու տեղը սպանելու: 97-ի յոյն-թրքական պատերազմի ժամանակ, զրոյց տարածեց, որ «պէրպիրին» տղան (Խաչիկը) գերի բռնուած է Լարիսայում: Տրապիզոնի թիւրքերը, կարծես մի ծանր բեռից ազատուած, սկսան իրար աչքալուսանք տալ:

1897 թւից Խաչիկ և ընկերը Ռուսաստանի վրայով անցան Բուլղարիա-Պուրկազ՝ իրենց արհեստով մի կերպ ժամանակ անցկացնելու: Հայի աղտոտ եսը այս անգամ էլ հանգիստ չուաւ նրանց, ինչ որ ինչ-եաններ զրպարտեցին, մատնեցին նրանց (ոչ թէ իբր յայտնի տէնօրիստների, այլ իբր վտանգաւոր յեղափոխականների) և այն ժամանակայ բուլղար կառավարութիւնը արտաքսեց նրանց: Միշտ կենդանի գործ պահանջելով՝ մինչև 1899 թւի առունը Վովկասում լեիկ միջիկ աշխատում էին թրուչունի նման մի օր կուշտ, երկու օր անօթի, բայց միշտ ոգևորուած, միշտ պարտաճանաչ և համեստ. նման չէին

նրանք այն տիպի հայդուկներին կամ տէռօրիստներին, որոնք միայն կուրի մէջ են յարգանք ներշնչում, իսկ նրանից դուրս փչանում են, դառնում մեծամիտ ու պահանջիտ:

1899 սեպտեմբերից Լավրովի նման սրիկայ Ժանդարմական օֆիցերներ՝ «Հայկական մի նոր դաւադրութիւն» բաց անելու և պաշտօնի մէջ բարձրանալու եռանդով՝ սկսան խելացնոր խուզարկութիւններ ու բանտարկութիւններ կատարել. բանտարկեալներից մի պատանի Պարոյր անունով, հիւանդացաւ ու մեռաւ: Ոստիկանութիւնը ամէն ջանք թափեց կորիւնները ձեռք բերելու, Օգեստայում, Վեկաստօպօլում և նրանց բնակած տեղում ձերբակալութիւններ արաւ, բայց նրանք կարողացան հետքերին կորսնցնել: Խաչէկ նոր հասել էր Բուլղարիա, երբ Պետոյի-Թաթուրի խումբը պատրաստուում էր ճանապարհ ընկնել: Զանձարացած անգործ մնալուց՝ նա ինքնաբերաբար ու սիրով միացաւ նրանց և Արքիանուպօլի հրաշալի կուռում իրեն պէս համեստ ու քաջ Թաթուրների, Օննիկների կողքին գոհ բերեց կեանքը նոյն Ոգուն, որը նրան հասարակ ժահկանացուների միջից առեւ բարձրացրել էր դէպի վեր, դէպի անմահութիւն...

### Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

#### Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Ե Ո Ւ Ր Զ Ը

ԱՐԱՐԻԱ. - Երբ համբուսումով թեան գողցնեք, դանդաղանքները այնքան ժխոր կը հանեն աշխարհի մէջ, երբ խաւիֆան կուզէ համախառնութեան մղձաւանջով սարսափահարել քաղաքակերթ աշխարհը, Արաքիան, որու հպատակութենէ կախում ունի սուլթանի խալիֆայութիւնը՝ ապստամբած է:

Արաքիան մշտապէս, թէեւ կարծաւուն ապստամբութեան դասական երկիրն է: Այդ երկիրը թիւրք գեներալներուն—ինչպէս հաճինքնուն— գերեզմանը եղած է, ուր կերթան կուրի դիւրաբորբոք ժողովրդի մը և հրեղէն, երբեմն վատառող կլիմայի մը դէմ: Բայց թիւրքիան, մանաւանդ Արդիւլ չամըզը, ինչ ալ ըլլայ, պարտաւոր է ամէն գոհողութիւն ընել: Արաքիան թիւրքիայէն չբաժնեւոր, որովհետեւ անոր կողմուտը իր կրօնային հեղինակութեան մասն է միանգամայն:

Իսլամական-Մէքքէ երկաթուղին, ըստ ոմանց, «էն մեծ մտածումը» սուլթան չամբիլի, խաղ մըն էր իսլամ աշխարհի համարումը շահելու համար. ստով, անորակեւի չամբիլը, որ խալիֆայութեան փաթոցին հետ «Մեծ Մարդասպանի» կարծիք փաթոցը— այնքան շնորհալիորէն կը վայելեցնէ, կուզէ ցոյց տալ թէ ինք միշտ բարեխնամ չայր մտնած է Մէքքէ գաղող հաճինքնուն համար և միշտ կը մտածէ աշխարհի բոլոր մասերէն կանաներուն հանգստութեան, երջանկութեան ու ապահովութեան մասին: Փոխանակ ծովային երկար, տուժանելի ճամբորդութեան, ուխտաւորները երբք օրէն Շամը շէրիֆէն, Բնայէն և մարզաբէն գեղեցիկներն առնել պիտի ըլլան: Սիւրէյի հիւսիս յուսիս (սրբազան կարաւան), որ կայսերական տարեկան ընծաները կը փոխադրէ Մէքքէի Մեծ Շէրիֆին համար, այլեւս յապաղումներ, վտանգներ չպիտի ունենայ:

Կրօնական է հրաման տակ թիւրք կառավարութիւնը քաղաքական նպատակն է որ կուզէ հնազործել այն է ապստամբութեան պարագային շուտով զօրք և ռազմամթերք հասցնել Արաքիոյ սրտին վրայ և ջախջախել ամէն դիմադրութիւն:

Այդ խաղաղակի ծնունդը, թիւրքերու ահաւոր ճգնաժամ, օղակուր մըն էր իսլամ աշխարհը ցնցելու, մտքը խորաշահելու համար: Գեանք մը, որ սկսած է արեւստական ղեկորով ճաշքշէն, և ծածկել սարսափելի իրականութիւնը արտաքին մտածումները նուազ: Սյուս. գծին համար, որ պատի պիտի զերէք մեւհուլան աշխարհին— Աքբասանց և մաւրիտաններու փառքը շատոց մեծած և անխառնալիքի կորուստ ըլլալով. — մասնաւոր հրաւեր եղաւ աշխարհի ամէն զեւն և շատ շուտեց ծայրագոյն արեւելքէն մինչեւ արեւմուտք իսլամութիւնը

արծազանք տաւ այդ հրաւերին և նշեցնէր տեղացին Յըւլըզ, ուր կը գտնուի ս. Գործին համար կազմուած կօմիսիօնը, չամբիլի նախագահութեան տակ: Ապագան գուցէ ցցնէ թէ չամբիլի և իր մեղակիցներու այդ ծրագրը, խաւաղողութեան վերջարի նախադրութիւն մըն էր, իսլամական տգիտութիւնը կրթելու և Յըւլըզի աւագաններու գրպանը խնդրացնելու համար: Կատակերգութիւնը— որուն ստեղծողը ռեքրեգութիւնն է— դու կը շարունակուի. Արդիւլ չամբիլի— սուլթան չամբիլի կախարդ— օրնուլթեանը և ներշնչումով աշխարհի ամէն կողմ մ'օլլանք, սօֆիտ աներ կերթան ս. զորքին համար պրօպագանդ ընելու և միանգամայն համախառնութեան մաքուր... սերմը ցանկու համար:

Նու երկրին մէջ թիւրքիոյ իսլամ և ոչ իսլամ քնակիչներէն կամաւոր և... չկամ ներստուութիւններու ժողովարարութիւն սկսած են ընել. որոշուած է ղեգախտ պաշտօնեաներու տարեկան մշյմէկ ամսականները վար ընել և հրաման ելած է նաեւ որ Գուրպան պայրամին մորթուած բոլոր ռեխարներու մորթեք ներքին Մէքքէի գծին շինութեան:

Աս տեսակ մուրացիկ մեղացներով չէր որ հուն պիտի ելլէր 1,700 քիլօմէթը երկայն երկաթուղիի հսկայ գիծ մը, որուն 40 քիլօմէթը միայն շինուած է, ան ալ խախտուել վերիվերոյ կերպով, որովհետեւ այդ գծին վրայ կաշխատցնեն անօթի, սկոր պիւտրոներ և կը հսկեն տանձալուի թիւրք ծարտարագէտներ, այն սկզբունքով թէ սրբազան գիծը պէտք է միմիայն իսլամական նախածեմութիւն մը ըլլայ, և արիւմիայն... աս պէտք է ստեղծ ձեռքը աշխատին անոր վրայ:

Իսլամութեան մուծ ճակատագիրը վարել փառասիրողները որոնք մեծ փայլաբուսած մը ընել ուզեցին, այժմ զգալով որ թիւրքերուն կերած ապուրը չէ այդպիսի գործի մը գուրկը կանգնել որուն համար երկու հարիւր միլիօն իրանք ծախք կը հաշուէ— գրեթէ օսւ. կայսրութեան տարեկան պիւստէն— կը մուսթրին երոպացիներուն, մասնաւորը գերմանական ընկերութեան մը յանձնել:

Թիւրք թերթերը չեն կարող ամենաշուայլ և ամենաանամէշ բանք գտնել— թէեւ այդ մասին այնքան ծոխ թիւրքերէն լեզուն— այդ երկաթուղիին առթիւ սուլթանին մ'արդաս էր և կ'ըօսնաս էր ոգին օրհնաբանելու համար, որ գիտէ ալլահին և մազաբէնին փառքը բարձրացնել:

Թիւրք լրագիրները և մասնաւորը շանձունը Թահիր պէյը, որ ամբողջ ցողի մը մարմնացած քիւլիհան և յուլիսան և յուլիսան և սրիկա յուլիսան է— օր, ժամ, րոպէ չեն փակցնել, յայտարարելու իսլամ ժողովրդին, թէ ամբողջ աշխարհ կը հիանայ սուլթան չամբիլի խելքին վրայ: Երբ աղ եղեմագործ մակաբոյ շնորբը, որոնց ամենիւրը իր մամուլին ստեղծ պահելուսած մշյմէկ շարագործներ են, երկնայեան էգանք կը լսեն և կը հաշուեն իրենց շողորթութիւնները սուլթանին ուղղուած, չեն կըսար գլանալ իրենք իրենց հոռմայեցի կայսեր ազնիւ խօսքը. «օրս պարագա շանցուցի»:

Թիւրք թերթերուն նայելով, աշխարհք սուլթանի կողմին վրայ կը դառնայ. կարծէ չուտել շինմէ Գօլայ թերթերը կարգաւ և բացականշէլ Գիկերոնի հետ. Oium cum dignitati

«Ազնիւ անգործութիւն»:

Երբ թիւրք խմբագիրները համաշխարհային երազներ կ'ոտարանակնէ, ապստամբութիւնը օրէ օր սպաննագին կերպարանք կըստանայ Արաքիոյ մէջ: Թիւրքիան բարոյապէս ու նիւթապէս կաշտակող մասցած, սովալուկ գայլ մը, անկարող է դէմ դնել իր երկրին մէջ արթնող գայրոյթի փոթորիկներուն: Իր գորքերը ամբողջ ծարաւ, բոքիկ ու թշուառ են: Ահաւոր ծարձաստիւն է որ իր եղեմաւոր և եղբարկան վայնասունը լսելի կընէ երկրին ամէն մէկ կէտէն. անէծքն է որ կը ժայթքէ տկար ու անզօր թղթերէ դէպէ գազան բեժիմը, վրէժխնդրութեան հուրն է որ կը վառէ արի սրտերը:

Արաքիան, այս րոպէս, ամբողջ թիւրք կառավարութիւնը տաճարի և շուտուկի մէջ դրած է: Գար ատեն մը, երբ արաքները կը փորձէին իրենց խեղճ հրացաններով ըզլ թուրքերը իրենց երկրէն, այնպէս որ իրենց յաճախակի ապստամբութիւնները կը վիժէին օսմանեան զօրքերու կատարելագործուած գէնուզօրքերուն դէմ: Այժմ, Արաքիան, գրեթէ մեծ մասով գիւնուած է նոր սիւտէմի գէնքերով, գոր կը հայթայթեն հարիւրաւոր վաճառակաւները, Գարմիլ ծովու ափին վրայ հաստատուած են որոնք իրենց յատուկ գործակալների մեղքով կուղարկեն մեծշու Միշուգետը և Տիգրանակերտի կողմերը: Թիւրքիան անզօր է Արաքիոյ անմայրածիր, վայրենի և խուլ ափսոսք պաշտպանի մաքսանենգներուն դէմ. Գարմիլ ծովուն մէջ ունեցած քանի մը յաճախուրակաւներն կեցած տեղերնին կը փութան և այսօր ինքզինքը կը գտնէ սպառազէն արաւ ժողովրդին դէմ, որուն ատենութիւնը դէպի թիւրքերը և ցուպային հպարտութիւնը որ ունեցած իր վաղաճուկ բայց մեծ պատմական դերը— չեն հանդուրժիր

Թաթար սերունդի մը Լուծը կրկնելու և շին ուզելու թողուլ որ իսկ ի ֆայն Երևանը խորթ սուլթաններու ձեռքը մնայ:

Թիւրքերու տիրապետութիւնը երբէք այսօրան չափ վտանգւած չէր Արաբիոյ մէջ: Համիդ-է-Ղայի իսլամը Եւթիւնի մէջ օսմանն ամբողջօրէն պաշարած է Սամանի մէջ: Սուլթանը զինուոր որկրելու տեղ օգնութեան, կրօնական միասնութեան Երևանը մը ծամբայ հանած է որ երթան, ընծաներով հանձնելու արաբները յանուն մարզաբէնի հնազանդ մասը խալիֆային:

Օրէ օր համիդ-է-Ղայի դրօշին տակ կուգան համախմբուի նըջանիկ Արաբիան, չիծաղը, Ասիոյ (Արաբիոյ Սասունը և կործիմ մասը), Նոյնիսկ ամենք, որոնք ղևա թիչ շատ սուլթաններու իշխանութեան կուգին հաւատարիմ մնալ: Եւթիւնի վալին հիւսէյին շեյխի փաշան ձեռք չիխալու համար ծպտուած շուտէ յատ ծովագերեայ նաւահանգիստը փախած է. իսկ Սաման, որ նեղ կերպով պաշարուած էր, և ուր կը գտնուէր եօթներորդ քանակի հրամանատարը մ'արէ շաւ Ալտունլար փաշան իր զօրքերով, լուր ելալ թէ անձնատուր եղած է արաբներուն: Ծովագերքի և Սամանի մէջ բոլոր յարաբերութիւնները իզգած, հեռագիրները ջնջած են... Երբօպան, մասնաւոր Անգլիան, ուշի ուշով կը հետեւին այդ կարեւոր շարժումներուն և շատեր Անգլիոյ մասը կուգին նշմարել անոր մէջ: Կրօնական պատգամաւորութիւնը որ արաբներուն շնորհ հանդարտեցնելու կերթար, կէս ծամբան մտացած է և կըսուատէ նոր հրահանգի Պոլսէն, ուր Երեւոյնը իր գրութիւնը կորսնցուցած, զգիտելու ինչ ընէ:

Վահագնիները, կեդրոնական Արաբիոյ հիանալի լեռնաղաշտին, Նէճէտի բնակիչները, որոնք իսլամութեան քողոքականներն կը սեպակն և կատեն սիւնիները իբրև աւելորդապաշտ, նորէն Արաբիան աշխարհակալելու ձգտումներ կը ցցեն: 1816-էն ի վեր, երբ Եգիպտոսի Իպրահիմ փաշան անթիւ ծախքորութիւններէ վերջն հազի հազ ջահիշխանց զանոնք և նոս մընք Մէքքէն և անոնց Էմիրը Պոլսի ղրկելով գլխատեցին, Վահագնները խնայ կեցած էին իրենց շարաշար պարտութիւնէն ստը: Կրօնապէս մոլիսանող, և արաբական էն մաքուր տիպարը կը կազմեն Վահագնները և կը բնակին Արաբիոյ սրտին վրայ, ամենաբարեբեր, բարեխառն լեռնավայրի մը մէջ. ծիծաղկոտ սոժ կղզի մը, անապատի ծովի մը մէջ՝ գոր կ'ակօսեն վիժխարի վատ ինքնը (ցամաք գետեր) և որու անհունութեան վրայէն սիւն ունը մահան սարսափը կը պտտցնէ:

Օսմանեան կառավարութիւնը յանկարծակիի եկած, հորինը վաշտ զօրք հաւաքած ասողէն անողէն, ծամբայ հանած է ղէպի Արաբիա, որոնք միջնաւ համին, գուցէ ավստամութիւնը աւելի համեմատական քայլեր տանէ:

Աստուծոյն գացող թիւրք զինուորները, հաւանորէն շնորհանան կրկնի ասօթ կիւմային և վատառողջ թէ հա մ'ան իրուն (Արաբիոյ կիւմի աւագուտ ծովագերք) մէջ իրենց դիմանկը փռն. ինչպէս Մուսնա վայրի հովիտին մէջ հաճինքըն գոհի ոչխարները: Հին ավստամութիւններուն ատեն Եգիպտոսէն կերթային զօրքերը, որոնք վարժ էին շոգ կիւմային, բայց այժմ Եգիպտոսը այդ ջրու դերը չի կատարել սուլթանին հանդէպ:

Պոլսոյ մ'իւրեք զինները արտասուագին պիտի նային սլացիկ միմարէններուն վրայէն, ղէպի և ղէպէ, ուր մ'ապէս յի խալիֆայութիւնը կը հոգեւարի և ուր ապի գէտ գէտ շրջաւ վերակենդանացնել իսլամութեան մարմինը:

Հաւատացնանքնու հրամանատարը, իր վարդէ անկողինին մէջէն, ուր Ազգիկ չիւլայի գառացանքները կը հեշտագգեն զինքը, համիսլամութեան տարտամ հեռապատկերի մէջ կը տնտէ պրոէն Մէքքէ-Մէտին: Ներքական քաղաքներուն անհետաքուք և կը նախագայ այն լեռի լեռի պատրանքը որ պիտի ծաշակէ իր բանեւհինգ տարայ ամուս, անբարոյական, աշխարհաւեր փատիշահութեան իբր արդիւնք:

Երջանիկ Արաբիան կուգէ թօթել թիւրքերու Լուծը, Մեծ Եւթիւն, որ կը նստի Թայֆա ուր Միտհատ փաշան խողիտուեցալ կը ձգուի վերստանանք նորէն իր օրինաւոր խալիֆայական մասնագութիւնը, գոր թիւրք սուլթանները անարժանաբար յափշտակած էին:

Քրիստոնեաները իրաւունք չունին շարիւր տէրութիւն մը, մողղվորը մը, երբ այլացեղ միւսիւրման տարրերն իսկ ատելով կատեն և որոնց արաբները նախատորէն ի պնէ-է-բէ-Լուսան - որդիներ ամունը կուտան:

Օսմանեան պատմութեան ամհրապոյր, արիւնթաթախ և սևամաղձ էջերուն մէջ, Ալիսէնի, Ալիբոէսի, Եւֆարատի գեղին ամողղք, բայց արդար բացազանշութիւնը, գուցէ լաւագոյն անմարտութիւն է զնորի մը և պետութեան մը համար, իսկ-է-բէ-Լուսան...

Ժ Օ Ր Ժ Ֆ Ա Վ Օ Ն

Ժընէվի արմատական կուսակցութեան պարագլուխը, որ միւսնոյն ժամանակ Շվեյցարիայի ամենափայլուն ու սիրուած քաղաքական դէմքերից մէկն էր, մեռաւ ամսոյս 17-ին 59 տարեկան հասակում:

Այդ մահը, որ ողբում է այսօր տմբողջ առաջադէմ Շվեյցարիան՝ խոր ցաւ պատճառեց նաև յորօշակ խմբագրութեան: Հանգուցեալը յեղափոխական աշխարհայեցողութեան ու տեմպերամենտի մարդ էր և — հրապարակական ճառերի ու մասնաւոր խօսակցութիւնների մէջ — քանիցս քաջալերել է մեզ իր տաք, անկեղծ և ազդու խօսքով:

Պես ձեզ հետ եմ, ձեր տրամագրութեան տակ եմ... տարաբախտաբար անզօր են իմ համակրութիւնները, — այսպէս էր գրում նա տարիներ առաջ մեր խմբագրութեան: Իբրև ղեկավար Le Genevois թերթի, նա երբէք առիթը չէր փակցնում մեր դատը փաստաբանելու: Իբրև միւստր ժընէվի կանտոնում և իբրև անդամ Շվեյցարական պարլամենտի՝ նա երբէք չէր զլանում իր աշակցութիւնը հայերին, յորօշակը՝ նա իր հովանաւորութեան տակ էր առել և դժուարին բողոքներում պաշտպան էր կանգնում նրան անյայտ դաւերի դէմ: Երբ 1896-ի աշնան Օսմանեան բանկը գրաւող մեր ընկերները Քրանսիայից արտաքսած՝ գալիս էին ժընէվի, Բերնի պաշտօնական շրջաններում խրատում էր ընկել և արդէն լուր էր պտտում, թէ Շվեյցարական կառավարութիւնը ևս չպիտի հանդուրժէր իր հողի վրայ յայն իշխանականներին, որոնք ուսմբարով էին խօսել և Պոլսում: Փայլօնի միջամտութիւնը հանգրստացրեց մեզ. յԱյո, անշուշտ, բուրժուազական ֆիլիստերներին համար ոճրագործներ են հայ յեղափոխականները. բայց սուլթանի անարգ ուժի մի դմբոստացողը անիշխանական զենքերով միայն կարող է կուսել հանգիստ եղէք: Այսպէս պատասխանեց Փայլօն մեր դիմումին:

Հայկական դատը չունէր Շվեյցարիայում աւելի անկեղծ և պերճախօս բարեկամ: Մինչև իսկ մահամբ ճիւղանդ լինելով՝ Փայլօն, սրանից երեք ամիս առաջ սիրով համաձայնեց նախագահել Ե. Հ. Ուսան. Միութեան կազմակերպած՝ Պրեսանսէի յայտնի կօնֆերանսին՝ Վիկտորիա Հալլում: Զգայուն ու կարեկցող սիրտ — հա Փայլօնի կարգինալ առաքինութիւններից միւր: Համակրելի ժողովրդական տրիբունի և մեր անկեղծ ու մտերիմ բարեկամի յիշատակը անընչելի կը մնայ մեր սրտերում:

Մորօշակի՝ խմբագրութիւնը, ինչպէս նաև Ե. Հ. Ուսան. Միութիւնը պսակ էին դրել հանգուցեալի դագաղի վրայ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

ԱՐԻՍՏԵԱՆ ՔԻՐՐՈՆ ստացած է՝  
ՔՐՐՐՐՐՐ «ՄՕԼԷԿԻԼ» կօմիտէից 90 մարկ (110 Ֆր. 80 ս.),  
ՆԱՐԻՆԳՈՒՆԳՐԻ Տայկական ընկերութիւնից Մ. Դաւիթի միջոցով 16 Ֆր. 70 ս., ն. Պողոսից 5 Ֆր., ԴԱՐՐՔՏԱՏԻ ռուսամուսկան խմբերից (տոցս թուով և մէկ թիւք) 200 Ֆրանք,



**ՔՐՈՏԱՆԻՑ (Ռուսմանիա)** Սոսիական Բալանսների մեջնոցով «Միասնական» խմբից 25 Քր., ԲԷՐՄԷ: գիւղաքաղաքի (Շվեյցարիա) մի համակրող տիկնուջից 5 Քր., ՊԵՏԵՐՆԱՅԻՆԻՑԻ կիստոից 50 Քր., տիկ. Ա.-ից 10 եւ 18 Փրանք

**ԱՄԵՐԻԿԱՎԱՆ** Վեստ-ֆուլդերնէն՝ Անդրանիկի եւ իր ընկերներու համար՝ Խ. Շաքարճեան 6 ղուար, Վ. Մամիկոնեան 5, Մ. Զարարեան 5, Հ. Մորճիկեան 2, Ոմն 2: Գումար 20 ղու. (100 Քր.): ՆիՇԷՆ (Սերբիա)՝ Համախոր մը 23 տիմար, եղբայրք Խ. Ռ. Մ. Թ. 20 տ., Հ. 3. 10 տ., Գումն 10 տ., սոք. Մ. Ն. Գ. 5 տ., Վանապետ 20 Քր., Գիւղապետ 20 Քր.: Գումար 100 Քր.: Ընդհանուր գումար 650 Քրանք 50: սանթիմ:

**ՎՐԻՊԱՎ.** — «Դրոջակ» թի 3 ԱՐԵՆՄՏԵԱՆ ԲիթՐՈՒ ստացած գումարների մէջ սխալմամբ մտած է՝ ԲԵՐԼԻՆ Ա. Տ. Մ.-ից 22 Քր. 15 սանթ. այս գումարը յանձնւած է Ե. Ս. Ռ. Միւրթեան:

**ՆԱԻԱՅՆԳՍԻՑ ԿԵՂԻ. ԿՕՒԻՏԷՆ՝**  
 «Բախտ» խմբ. Ռաջոց 8 ուրբի, ՍՊԱՐԱՊԵՏԻ «Իերձակ» խմբից՝ Գիորկի 1.45, Մ. Շահում 1.45, Մ. Նուբար 1, Աղաի 1, Տ. Աւետիգ 1.45, Մ. Զորավար 1.45, Բ. Զորավար 1.45, Ռոսորդ 1, Հերոզ 1.45, Ջիւնոր 0.25, Շիբլան 3.10, Թէյրան 2.40, Սմբատ 2.40, Ե.-ի միջոցաւ՝ Շիրակ 0.60, Ե.-ի միջոցաւ՝ Փերիկ 0.40, Ռափայիկ 0.20, Բ.-ի միջոցաւ 0.40, Տ. Աւետիգի միջոցաւ 0.50, Ալեքսան 0.15, Սեպուհ լեռից 46.50, «Նաշաձեւ» խմբ. 10, «Միկար» խմբ. 20, «Վարազդատ» խմբ. 15, «Արշալիք» խմբ. 4, քանտարկեալի մը համար 5: Գումար 130 ուրբի 66 կօպէկ:

**ՅՈՎԱՓԻ ԿԵՂԻ. ԿՕՒԻՏԷՆ՝**  
 Փրանտ 109 ղը: «Պատանկաց» խմբ. 43 ղը: **ՎԻՃԱՊԻ ԿԵՂԻ. ԿՕՒԻՏԷՆ՝**  
 Հայրենիք 10, 15, 15, 20 եւ 10 դահեկան, Հոսանք 5, Գատա 5: Գումար 80 դահեկան:

**ԱՐԹԻԻ ԿՕՒԻՏԷՆ՝**  
 «Ազատ» խմբ. 34 դահեկան, տիկ. Արաքսիէ 5, տիկ. Արշալոյս 5, երեք ընկերուհիներից 57, «Ստանբուլ» խմբ. 618, «Սարասի» խմբ. 103: Գումար 822 դահեկան:

**ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿՕՒԻՏԷՆ՝**  
 ԶՐԱԲԵՐՐԻ ԿՕՒԻՏԷՆ. — N° N° 101 Զրբորի հարսանիքից Տր-քիսի ծնոսք 15 ուրբի, 102 Շիկահերի Բողոք խմբից 12.50 n., 103 Զրբորի Մ. եւ Ա. Նշանադրութիւնից 10.30 n., 104 Զրաքերի Շարժական խմբից 6.50 n., 105 Սարաքի Ժաղիկ խմբից 34.84 n., 106 Առուակի Ուրուակ խմբից 10 n., 107 Զրաքերի Յոյս խմբից 3 n., 108 Զրաքերի Ե. Պ.-ի, Ե. եւ Մ. Գ.-ի եւ Յ. Ե.-ի տօներից 7 n., 109 Զրաքերի Կ. Փ.-ի եւ Մ. Մ. Մ.-ի տօներից 5.50 n., 110 Շիկահերից Խ-նի ծնոսք 80 n., 111 Ժրաշանից պսակ. առթիւ Զրբոր 25 n., 112 Բլուր գ-ից 11.75 n., 113 Վտակ գ-ից Մեղու խմբից 16 n., 114 Նախընթաց գ-ից 3 n., 115 Զրաքերի Շահապիվան խմբից 5 n., 116 Կղզի գ-ի Գարուն խմբից 9 n., 117 Կղզի գ-ի Անի խմբից 1 n., 118 Արշարունի գ-ից 2.45 n., 119 Պրակ գ-ից 42.58 n., 120 Տղմուտի Կաշա-գործ խմբից 5 n., 121 Տղմուտի Նեղրած խմբ. 3 n., 122 Ժա-նաստանի տեղ. կօմ-ից 28 n., 123 Կար գ-ի Արամ խմբ. 5.10 n., 124 Տղմուտ գ-ի Անու խմբ. 10 n., 125 Սարդարի Ժաղիկ խմբ. 50 n., 126 Առուակ գ-ից 5.65 n., 127 Նորարիների տեղ-դաշններից 11.99 n., 128 Նորարիների գաղթ-ից 2.90 n., 129 Դ-ճղի Ախուրեան խմբ. 7.25 n., 130 Զրաքերի Սիւնեան խմբ. 3.85 n., 131 Եփրատ գ-ի Եփրատ խմբ. 20 n., 132 Կիկեան գ-ից 8.45, 133 Մ. եւ Ա. պակաղը. Զրաքերի 11.65 n., 134 Օղածորից 20 n., 135 Ժաղկածորից 14.85 n., 136 Ն.-ի մի ոմ պահից 24 n., 137 Արամ գ-ի տեղ. կօմ-ից 30 n., 138 Կար-րածոր տեղ. կօմ-ից 20 n., 139 Սպիտակ-Դոշի տեղ. կօմ-ից 14.85 n., 140 Զրաքերի Յոյս խմբ. 3 n., 141 Գետածոր գ-ից 2.80 n., 142 Հիւսիս գ-ից 10 n.: Գումար 612 ուրբի 76 կօպէկ: Մինչեւ 5 մարտ 1902:

N° N° 143 Լննավայրից 7 ուրբի, 144 Անտոնի գ-ից 5.03 n., 145 Զրաքեր գ-ից 10 n., 146 Լոնի գ-ի Պահլիկ խմբ. 15 n., 147 Պրակի գիւղարակ. 15.20 n., 148 Բլուր գ-ից 9 n., 149 Շաւարշեան խմբ. 4 n., 150 Ճամբորդ գ-ից 21.55 n.: Գումար 88 ուրբի 78 կօպէկ:  
 N° 7 տետր. — 301 Աւարայրի խմբ. 12.50 ուրբի, 302 Զրաքերի կրկնայրից 62.42 n., 303 Տ-ղից նուէր 14 n., 304 Տղմուտի Աղաւնի խմբ. 9 n., 305 Արբանի-Կարդուից 5.82 n., 306 Աղունքի-Գումայից 19.70 n., 307 Մամբուանի Ատվարից 4.55 n., 308 Պարտիզանան Տիտանից 70.43 n., 309 Արեկի

կօմ-ից 17.58 n., 310 Փայլուն գ-ից 5 n., 311 Մանուկ գ-ից 2 n., 312 Կիկեանի Զէյթուն խմբ. 2 n., 313 Կարմրակի Բուգ խմբ. 1.50 n., 314 Չկածորի կօմ-ից 7.75 n., 315 Արմախի Ասիւ խմբ. 4 n., 316 Նախագործի Արծիւ խմբ. 37.50 n., 317 Նախագործի Ներկ-ից 70.10 n., 318 Եփրատի կօմ-ից 9 n., 319 Եփրատի կօմ-ից 18.60 n.: Գումար 372 ուրբի 95 կօպէկ:  
 Ընդհանուր գումար 1072 ուրբի 49 կօպէկ:

1901 թ. դեկտեմբերին Նաշաձեւ կից 10 ուրբի, Հայայր խմբ. 10, Սկանակից 80, Մեքենա խմբ. 10, Ոսկանապատից 200, 1902 թ. յունւարին՝ Երեւ-ից 600, Մեծ քաղաք. հանգս-նակ. յունւ. 5-ին 415.55, Մեծ քաղաք. կրկնայրից 77, Կետուր-ւարին՝ Ոսկանապատից 300, Խանի ծնոսք 6.35, Ախալք խմբից (Ազնիի Ժեթրոնի տամենակից) Այայտ, Ազնի Ժեթ-րունի, Եղբայրատէր, Զոռ-Օղի, Խալախալ, Զորամէկ, Համաձայն, Ասպար, Սուր, Երկաթ, Կաշ Բարեգործ, Նետիչ, Տոգուտ 13, 4 հատ Դարիքի գրք. համար 1, Մարտին Անց-ից 2. եւ Գ.-ի միջոցով 81, Անց-ից Գումանի ծնոսք հանգանակած 188, Կար-ից Սերգեյի միջոցով 257, Տարունի Ասիւ խմբից՝ Վառվաձ, Դոճիք, Ֆիրդուսի, Կարիճ, Կայծակ, Փարամագ, Թուր, Արայէլ Ճարտար, Նետանիչ, Մարմանդ գետ, Տէրաէրեան, Ուժեղ, Սէրգո, Երուանդ, Միր Ռազմիր 16, Բէլէան դաշնակից եռանդ խմբից 10, Զրաքերից 300, 14 հատ Դարիքի թրօ. համար 5.60, Ոսկանապատից 700, Շիրվանի խմբ. 3, Ոսկանապատից 250: Գումար 3432 ուրբի 40 կօպէկ:

1892 թ. մարտ եւ ապրիլ ամիսների՝ Աւարայր խմբ. 20 ուրբի, Սիւնից խմբ. 15.60, Անդրանիկ խմբ. 6, Նպատակ խմբ. 5, Մազնիս խմբ. 40, Մոլորակներից 100, Բողոքացի Ա.-ից 9, Վազգէն խմբ. 30, Առուակ խմբ. 42, «Պետե»-ի կրկնայրից 380, ստացւած վիճակախոյից 891, Վազք խմբ. 16.15, Յունո խմբ. 10.60, Շէրօ Զաթոյից 11.60, Խայթ եւ Երկունք խմբ. 30.40, վիճակախոյից նւէր 30, հին ապտիկ Կ. եւ Ա.-ից 13, գրքերից Ե.-ի վաճառած 18.50, Եկեղեցուց 150: Գումար 2285 n. 47 կօպէկ:

**Լ. Պ. ԿԵՂԻ. ԿՕՒԻՏԷՆ՝**  
 ՈՍԿԵՆԱՆԻ կեղը. կօմիտէն՝ ԱժՆԱՅԱՆՔԻՆ 297 դահեկան, «Արաք» խմբի հետեւեալ անդամները (յունւ. փետրվ. մալու: ապրիլ) Արարատ 25, Զինուոր-Հրացան, Արեւ, Աստղ, Հակ. 33-ական, Վեցարւածանէ 33, Կամովին 590, Թուրք՝ իբր կանխավճար 4,450, Անկեղծ հայրենասէր 17,800: Գումար 23,627 դահեկան:

**ՎՐԻՊԱՎ.** — «Դրոջակ» N° 4 Լ. Պ. կետր. կօմիտէի ստաց-ւածների մէջ մոռցւած էր՝ Գոյըսնէրու 890 դահեկան:

**ՐՈՒՄԱՆԱՎ՝**  
 ԳՆՈՒՐԱ ԵՆԹԱԿՈՒՄԷՆ ստացած է՝ ՍՈՒՂԻՆԱՅԻ ՏԱՍԿԱՐՈՒ-ներէ՝ Կր. Պող. 15 Փրանք, Յով. Յարութիւն 10, Համբ. Աւե-տիսեան, Թ. Բարսեղեան, Պետ. Առագելեան, Սետ. Յովհան-նէսեան, Յակ. Կարապետեան, Սր. Արասման, Խճ. Սար-գիսեան, Մկ. Իկիթեան, Յովհ. Գեղորգեան. Մամ. Համբարձում, Սարդ. Արթիսեան, Մր. Յարթիսեան, Գր. Յովհաննէսեան, Մի. Յարթ., Մրգ. Սէֆէրեան, Մ. Թէրզեան, Յակ. Կրիգորեան, Խաշ-Յարութեան, Գր. Մանուկեան, Մր. Գրիգորեան, Խ. Համբար-ձումեան, Պող. Մարտիրոսեան, Ար. Դազարեան, Մու. Վարդա-նեան 5-ական Փրանք: Գումար 150 Փրանք:

**ՓԱՐԻԶԻ ԿՕՒԻՏԷՆ՝**  
 Պ.-ի ուսանողներից (250 ուրբի) 593 Փրանք:

**Դ Ա Ր Ի Բ**  
**Ա. Չ. Ս. Ո. Ի. Թ. Ե. Ա. Ն. Ջ. Ա. Ն. Ա. Պ. Ա. Ը. Ի. Ն.**  
 ՊԱՏԱՅԻՐՆԵՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 Գ. Ի. Բ. Ի. Ի  
 Գինն է 60 սանտիմ, Ճանապարհածախսով 70 ս.:  
 Ի. Ո. Յ. Ս. Ե. Ս. Ս. Ի  
**ԱՍՐՈՒՄԱՅԻՆ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ**  
 (ԱՐՏԱՏՊԱԾ «ԴՐՕՇԱԿ»-ԴՅ)  
 Գինն է 50 ս., Ճանապարհածախսով 60 ս.: Գինն է  
 Rédaction du «Droschak», Genève (Suisse)